ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԵՐ

Օժանդակ ձեռնարկ ուսուցիչների համար

Քաղաքացիական կրթության նախագծեր

Նախագծերը պատրաստված են USAID-ի Քաղաքացիական կրթության ծրագրի շրջանակներում

Քաղաքացիական կրթության նախագծեր

Օժանդակ ձեռնարկ ուսուցիչների համար

Հեղինակներ՝

Աշխատանքային խմբի ղեկավար՝

Մակա Բիբիլեիշվիլի

Խմբագիր՝ Ռիտա Բաինդուրաշվիլի

2023 թ.

Ռեսուրսը պատրաստվել է ամերիկյան ժողովրդի աջակցությամբ և Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության ջանքերով: Տվյալ ռեսուրսում ներկացագված տեղեկությունների և արտահայտած տեսակետների համար պատասխանատու են հեղինակները, և դրանք չեն ներկայացնում PH Internatinal-ի կամ Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության կամ Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարության տեսակետները:

Նախաբան

2022-2027 թվականներին PH INTERNATIONAL կազմակերպությունը Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (USAID) ֆինանսավորմամբ և Գիտության և կրթության նախարարության աջակցությամբ Վրաստանում իրականացնում է USAID-ի Քաղաքացիական կրթության ծրագիրը:

Ծրագրի նպատակն է բարձր քաղաքացիական գիտակցության, քաղաքացիական պրոցեսում ներգրավված երիտասարդների դաստիարակություն: Ծրագիրը նախատեսում է տեխնոլոգիաների ներդրում քաղաքացիական կրթության ուսանում-ուսուցանման գործընթացում, դպրոցում ժողովրդավարական մշակույթի ներդրման աջակցություն, բիզնեսի և դպրոցի կապ: Վրաստանի մասշտաբով միավորված գործընկեր կազմակերպությունները ծրագրի շրջանակներում բաշխված գործառույթային ծանրաբեռնվածությամբ նպաստում են այս նպատակին հասնելուն:

Սույն ձեռնարկը ծրագրի շրջանակներում քաղաքացիական կրթության մանկավարժների համաժողովն (ֆորում) է ստեղծել: Սա այն կարևոր ռեսուրսներից է, որը ֆորումն այլ ակտիվությունների հետ ստեղծում է ծրագրի շրջանակներում: Ձեռնարկը երաշխավորության բնույթի է և նախատեսած է ուսուցիչների համար, նպաստում է աշակերտների կողմից, ուսուցիչների օժանդակությամբ, Ազգային ուսումնական պլանի և չափորոշչին համապատասխան նախագծերի իրականացմանը: Այս ակտիվությունների նպատակն է երիտասատրդների մեջ ժողովրդավարական արժեքների, առաջնորդության որոշումներ կայացնելու ունակության զարգացումը: Յուրաքանչյուր նախագծում տրված է շատ օգտակար և հետաքրքիր ռեսուրս, ինչը տալիս է ստացած գիտելիքը գործնականում կիրառելու հնարավորություն:

Նախագծի իրականացմամբ աշակերտներն աջակցում են դպրոցական ժողովրդավարության զարգացմանը, համայնքում քաղաքացիական պատասխանատվության հզորացում և հիմնախնդիրների լուծում: Իսկ այս ամենն ակտիվ քաղաքացի ձևավորվելու հիմքն է:

Ցանկանում ենք հաջողություն:

Ներածություն

Սույն ձեռնարկը պարունակում է երաշխավորական բնույթի 3 նախագիծ, որոնց իրականացումը հնարավոր է ըստ աշակերտների հետաքրքրությունների և դպրոցի կարիքների:

Նախագծային ուսուցումն արժեքների վրա հիմնված կրթություն ստանալու կարևոր միջոցներից մեկն է, որի ընթացքում, համարում են, որ աշակերտները շատ ավելի լավ և խորն են կարողանում սովորել հարցը և դրա հետ կապված ճիշտ քաղաքացիական վերաբերմունքներ ձևավորել: Սույն նախագծերի նմուշները հիմնականում նախատեսած են «Քաղաքացիական կրթության նախագծեր» առարկայի համար, չնայած դրանք կարելի է կիրառել տարբեր դասարաններում, ակումբներում, աշակերտների ինքնակառավարությունում՝ ձևափոխելով ըստ անհրաժեշտության:

Ցանկալի է մանկավարժները նախապես աշակերտներին ծանոթացնեն նախագծերին և նրանց մասնակցությամբ ընտրեն: Դասարանում հնարավոր է անցկացվի մեկ կամ մի քանի նախագիծ (քանակը կախված է աշակերտների հետաքրքրություններից, կարողություններից և ուսուցչի պատրաստակամությունից՝ միանգամից ղեկավարել մի քանի նախագիծ): Ցանկալի է կազմակերպել բանավեճ՝ ի՞նչ գիտեն աշակերտներն ընտրած նախագծում տեղ գտած հիմնախնդրի, հարցի մասին, և այդպես տեղի ունենա հաջորդ փուլի պլանավորումը:

Նախագիծն իրականացնելիս կարևոր է յուրաքանչյուր փուլի անցկացում, որն ապահովում է նրա հաջողությունը և նպատակին հասնելը:

Նախագծի անվանումը

I փուլ

Ոլորտի (համայնքի բնութագիրը), հիմնախնդիրների նույնականացում ոլորտի հետ:

Աշակերտների ակտիվությունը	Անհրաժեշտ ռեսուրսներ
Աշակերտներն ընտրում են ոլորտներից մեկը, որը կարևոր կհամարեն դպրոցական համայնքի համար:	Ոլորտին վերաբերող ուսումնական ռեսուրս համապատասխան հանգուցային հարցերով, որոնք աշակերտներին կօգնեն նույնականացնել հիմնախնդիրը:
Աշակերտները ծանոթանում են ընտրած ոլորտի հետ կապված համապատասխան գրականությանը:	

Աշակերտներն իրավիճակային վերլուծություն են անում, դրա համար նրանք ընտրում են համապատասխան աղբյուրները և ուսումնասիրության մեթոդները:	

I փուլի արդյունքում աշակերտը պետք է ձևակերպի իրավիճակային վերլուծություն:

II փուլ

Գաղափարներ և հնարավորություններ

Աշակերտների ակտիվությունը	Անհրաժեշտ ռեսուրսներ
Աշակերտներն ակտիվությունների համար առանձնացնում են ձևեր, ձևակերպում են ակտիվությունների գաղափարներ:	Ուղորտի հետ կապված նախագծի անալոգներ
Աշակերտները ստեղծում են նպատակների հիերարխիա՝ • Ակտիվության նպատակը, • Նախագծի նպատակը:	
Աշակերտները ձևակերպում են սպասվող արդյունքները՝ • Ի՞նչ ազդեցություն կունենա նախագիծը դպրոցական հասարակության զարգացման վրա:	
Վերլուծում են, թե ինչ ռեսուրսներ անհրաժեշտ կլինեն պլանավորած ակտիվությունների իրականացման համար, ինչքանով են հասանելի այդ ռեսուրսները:	
Աշակերտները պլանավորած ակտիվությունները իրականացնելու համար ձևակերպում են գործողությունների պլան:	

II փուլի արդյունքում աշակերտները պետք է ներկայացնեն նախագծի տիտղոսային մասը՝ նպատակ, արդյունք, ակտիվություն, գործողությունների պլան:

III փուլ

Նախագծի իրագործում

Աշակերտների ակտիվությունը	Անհրաժեշտ ռեսուրսներ
Նախագծի իրականացման գործընթացում աշակերտները փնտրում են հատման կետեր և համագործակցում են դպրոցական հանրության անդամների հետ՝ • Դպրոցի այլ աշակերտների, աշակերտների ինքնակառավարման հետ, • Դպրոցի այլ աշակերտների հետ, • Դպրոցի վարչակազմի հետ, • Արտաքին գործընկերների հետ (անհրաժեշտության դեպքում):	Ֆունկցիոնալ-բաղադրիչների ունակությունների վերաբերյալ ռեսուրսներ, որոնք աշակերտներին սովորեցնում է ինչպես շփվել հասարակության անդամների հետ առանձին ոլորտներում՝ • Ստեղծագործականություն, • Հաղորդակցում, • Համագործակություն, • Քաղաքացիաություն, • Բնավորություն/կամք, • Քննադատական մտածողություն:
Աշակերտները նախագծերը ներկայացնում են դպրոցական հանրության առջև:	

III փուլի արդյունքում աշակերտները պետք է ներկայացնեն նախագծի արդյունքները:

IV փուլ

Կայունություն և ապագայի պլաններ

Աշակերտների ակտիվությունը	Անհրաժեշտ ռեսուրսներ
Աշակերտները դպրոցական հասարակության անդամների հետ գնահատում են նախագծի արդյունքները և պլանավորում են՝ ինչ է անհրաժեշտ կայունության ապահովման համար:	

IV փուլի արդյունքում դպրոցը դպրոցական ուսումնական ծրագրում կանի/կստեղծի գրառումներ, որոնք կլինեն աշակերտների իրականացրած նախագծի կայունության երաշխիքը:

Նախագծի իրականացման գործընթացում կարևոր դեր է ստանձնում առարկայի ուսուցիչը: Ռեսուրսների վրա հիմնվելով՝ նա օգնում է աշակերտին հասկանալ հարցը, ճիշտ նույնականացնել հիմնախնդիրը կամ էլ նախագծի հաջորդ փուլերը: Ակտիվությունների ժամանակի/ժամկետի և պատասխանատու անձանց վրա բաշխելու ձևը տեսե՛ք հավելված 1-ի տեսքով:

Յուրաքանչյուր նախագծում տված է տարբեր փուլերի համար անհրաժեշտ ռեսուրս, ինչը հարցը և ակտիվությունները հիմնավոր ըմբռնելու հնարավորություն է տալիս:

Նախագծերն իրականացնելիս ցանկալի է ուսուցիչը փուլ առ փուլ իրականացնի աշակերտների ինքնագնահատումը՝ իրենց համար ընդունելի ձևով: Նշված գործընթացի արդյունքներն ուսուցչին կօգնեն լիարժեք զարգացնող գնահատականի ձևակերպման հարցում:

Ցանկ

ԴԱՐՁԻՐ ՔԱՂԱՔԱՑԻ ԼՐԱԳՐՈՂ..... 9
ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ.....24
ԻՆՉՊԵ՞Ս ԲԱՐԵԼԱՎԵՆՔ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ 42

ԴԱՐՁԻՐ ՔԱՂԱՔԱՑԻ ԼՐԱԳՐՈՂ

Թեմա	ԶԼՄ-ներ և քաղաքացիական հասարակություն
Խնդիր	Քաղաքացիական լրագրություն
Նպատակ	Լրագրողական նյութերի ստեղծման ճանապարհով դեռահասների մոտ զարգացնել գրելու, պատմելու և տեխնիկական հմտությունները և նպաստել նրանց՝ որպես ակտիվ քաղաքացիների ձևավորմանը
Միջառարկայական ինտեգրացիա	Աշխարհագրություն, Պատմություն, Քաղաքացիական կրթություն, Վրաց լեզու, Օտար լեզու

Ծրագրի համապատասխանությունը քաղաքացիության թիրախային հասկացություններին

Հասարակություն	Ժողովրդավարություն	Քաղաքացիական մասնակցություն	Կայուն զարգացում
Աշակերտը կարող է համագործակցել այլ մարդկանց/սոցիալական խմբերի/հաստատությունների հետ և նրանց հետ հարաբերություններում՝ դրսևորել ասսերտիվություն, գիտակցելով, որ ուրիշների հետ հարաբերություններն օգնում են սեփական զարգացման մեջ: Ինչպես նաև համայնքում առկա մարտահրավերների շուրջ լագրողական նյութեր ստեղծելիս հաջողեցնել առողջ	Աշակերտը գիտակցում է ԶԼՄ-ների դերն ու ուժը ժողովրդավարական հասարակության ձևավորման գործում: Լրատվամիջոցներն օգտագործում է որպես ժողովրդավարության զարգացման կարևորագույն գործիքներից մեկը: Այս գործընթացում աշակերտը գիտակցում է, որ բոլորն ունեն քաղաքացիական-քաղաքական, սոցիալ-տնտեսական կամ կոլեկտիվ իրավունքներ, և այդ իրավունքների պաշտպանությունը կարևոր է ժողովրդավարության	Աշակերտը գիտակցում է իր սեփական դերը հանրային բարեկեցության հասնելու գործընթացում: Նա գիտի, որ ժողովրդավարական հասարակությունը բաղկացած է ակտիվ քաղաքացիներից, որոնց թվում նաև ինքն է: Նաև որպես ակտիվ քաղաքացի, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ, փորձում է լուծել հանրային խնդիրները	Աշակերտը հասկանում է, որ տեղական գործողությունները կարող են ունենալ գլոբալ հետևանքներ, և որ կայուն զարգացումը կարևոր է մարդու բարեկեցության և զարգացման համար: Աշակերտը նպաստում է կայուն զարգացմանը՝ լուսաբանելով տարբեր թեմաներ և ուշադրություն հրավիրելով առկա խնդիրների վրա, որոնք խոչընդոտում

շփումներ հաստատել տարբեր ակտորների հետ:	զարգացման տեսանկյունից: Նա նաև կարող է ապահովել թափանցիկություն լրագրողական նյութերի վրա աշխատելիս և գիտակցել, որ կառավարությունը պատասխանատու է հանրային խնդիրների լուծման համար:	լրատվամիջոցների միջոցով պատմելով այդ մասին հասարակության լայն զանգվածներին:	են կայուն զարգացմանը:

Ծրագրի կապը ժողովրդավարական մշակույթի իրավասությունների հետ

Արժեքներ. մարդու արժանապատվության և իրավունքների գնահատում, Ժողովրդավարության, արդարության, ամբողջականության, հավասարության և օրենքի գերակայության գնահատում:

Վերաբերմունք. հարգանք, քաղաքացիական մտածողություն, պատասխանատվություն, վստահություն:

Հմտություններ. ինքնուրույն ուսուցման հմտություններ, վերլուծական և քննադատական մտածողության հմտություններ, լսելու և դիտելու հմտություններ, կարեկցանք, լեզվի, հաղորդակցման և բազմալեզու հմտություններ, համագործակցության հմտություններ:

Գիտելիք և քննադատական մտածողություն. ինքնագիտակցություն և քննադատական մտածողություն, աշխարհահիմացություն և քննադատական վերլուծություն (քաղաքականության, իրավունքի, մարդու իրավունքների, մշակույթի, միջմշակութային, կրոնի, պատմության, լրատվամիջոցների, տնտեսագիտության, շրջակա միջավայրի կայուն զարգացման և պաշտպանության զարգացում):

I փուլ - Խնդիրը բացահայտելու և հիմնավորելու փուլ

Առաջարկ ուսուցչին

Երաշխավորություն ուսուցիչներին՝

Առաջարկվող նախագծի նմուշը և նրանում ընդգծված խնդիրը վերաբերում են ՁԼՄ-ների և քաղաքացիական լրագրության դերին, որը կարելի է գործնականում փորձարկել՝ տարբեր ձևաչափերով արդիական թեմաների լուսաբանմամբ: Բացի այդ, նախագիծը կարող է երկարաժամկետ դառնալ:

Քայլեր, որոնք պետք է ձեռնարկվեն խնդիրը բացահայտելու և հիմնավորելու համար

- Գիտակցական գրոհ. ի՞նչ է մեդիան և լրագրությունը:
- Աշակերտներին տեղեկատվության տրամադրում լրատվամիջոցների գործառույթների մասին:
- Քննարկում. ԶԼՄ-ների դերը հանրային բարեկեցության հասնելու գործում:
- Աշակերտներին ծանոթացնել քաղաքացի լրագրողների պատրաստած արտադրանքին:
- Նյութի մշակում և քննարկման կազմակերպում հետևյալ հանգուցային հարցերի շուրջ:

- Ո՞վ և ինչպե՞ս կարող է դառնալ քաղաքացի լրագրող: Ի՞նչ է անհրաժեշտ դրա համար:

- Ինչո՞վ է կարևոր մեր՝ որպես քաղաքացի լրագրողների, ակտիվությունը հասարակության/համայնքի/երկրի/աշխարհի համար:

-Ի՞նչ արդյունքներ կարող ենք ստանալ այս նախագիծն իրականացնելով:

<u>Անհրաժեշտ ռեսուրսներ՝</u> պրոյեկտոր, նոութբուք (տեսանյութ/ֆոտո ռեսուրսներ՝ ցուցադրելու համար)

Խնդրի փաստարկման նմուշ

Ժամանակակից աշխարհում, ուր տեխնոլոգիաները մեծ դեր են խաղում մարդու զարգացման և կյանքը պարզեցնելու գործում, հասարակության լայն զանգվածներին տեղեկատվության տարածումը շատ ավելի դժվար է դարձել: Հետևաբար, լրագրությունը և լրատվամիջոցները, որպես տեղեկատվության հիմնական տարածող, ենթարկվել են զգալի տրանսֆորմացիայի: Ավելին, վերջին տարիներին հատկապես, ակտիվ խոսվում է ավանդական ԶԼՄ-ների անհետացման վտանգների և, առհասարակ, լրատվամիջոցները քաղաքացիական լրագրությամբ փոխարինելու մասին:

Լրագրության փոխակերպումը ավանդականից՝ «ավելի պարզ» մասնագիտության, կարելի է համարել դրական միտում, քանի որ պրոֆեսիոնալ լրագրողի ռեսուրսները միշտ չէ, որ կարող են լուծել այս կամ այն համայնքում առկա բոլոր լոկալ խնդիրները: Այսօր քաղաքացի լրագրող կարող է լինել ցանկացած մարդ, ով որպես քաղաքացի կկատարի իր քաղաքացիական պարտքը և սեփական դերակատարությամբ կնպաստի հասարակական կյանքի բարելավմանն ու հրատապ խնդիրների լուծմանը կամ պարզապես տեղեկատվություն կտրամադրի քաղաքացիներին՝ տարբեր հետաքրքիր թեմաների շուրջ:

Քաղաքացի լրագրողը կարիք չունի աշխատել մեդիա կազմակերպությունում կամ մասնագիտացվել այս ուղղությամբ: Ընդամենն անհրաժեշտ է ինտերնետ, գրելու հմտություններ կամ սմարթֆոն, որով կարող եք լուսանկարել կամ տեսանյութ հրապարկել: Ժամանակակից տեխնոլոգիական միջոցները և թվային մեդիայի զարգացումը հնարավորություն են տալիս ստեղծել մեդիա արտադրանք և տարածել այն լայն հանրության շրջանում: Ստեղծված նյութը կարող է տարածվել ցանկացած սոցիալական մեդիայի կամ անձնական բլոգի միջոցով:

Վրաստանում քաղաքացիական լրագրության պատմությունն ընդամենը տարիների պատմություն ունի, և այն դեռ զարգացման սկզբնական փուլում է, սակայն ցանկացած մարդու կողմից տարածված տեղական պատմությունը կարող է հանգեցնել լայնածավալ և նույնիսկ գլոբալ փոփոխությունների: Գյուղացու կողմից արված լուսանկարը, որը պատկերում է երեխաների ծանր աշխատանքը և կամ բնապահպանական խնդիրները, կարող է հանգեցնել ոչ միայն փոփոխությունների այդ գյուղում կամ քաղաքում, այլև ողջ երկրում: Սա հենց քաղաքացի լրագրողի դերն է, որն այսօր Վրաստանում դեռևս հստակ չեն գիտակցում, մինչդեռ վերջինիս գործարկումը կօգնի, որպեսզի դպրոցական տարիքից մեծացնենք պատասխանատու և տեղեկացված քաղաքացիների:

Խնդիրների բացահայտման և ծրագրի ակտիվությունների իրականացման ռեսուրսներ

● Քաղաքացիություն VIII դասարան, «Դիոգենե» Հրատարակչություն, (էջ 47-56):

● ՁԼՄ-ներ և մեդիա գործառույթներ:

● Ինչպե՞ս դառնամ ակտիվ քաղաքացի (էջ 18-21):

● Քաղաքացիական (քաղաքացիների) լրագրությունը և զարգացման հեռանկարները Վրաստանում:

● Որքանո՞վ է կարևոր քաղաքացիական լրագրությունը:

● Տասը խնդիր, որոնք էապես լուծելի են, և որոնք անտանելի են դարձնում կյանքը Վրաստանում

II փուլ - Նպատակների, առաջադրանքների հաղթահարման համար անհրաժեշտ ակտիվությունների սահմանում

Առաջարկ ուսուցչին

Երաշխավորություն ուսուցիչներին՝

Կարևոր է, որ առաջարկվող ծրագրի նպատակները, առաջադրանքները և դրանք հաղթահարելու ակտիվությունները պլանավորվեն ձեր աշակերտների և տեղական համայնքի կարիքներին և շահերին համապատասխան: Ցանկալի է նաև, որ դեռահասների հետ ծրագրի պլանավորման գործընթացում ներգրավվեն տեղական համայնքի ներկայացուցիչներ, դպրոցական համայնքի անդամներ, տեղական ինքնակառավարման մարմիններ, տարբեր հարցերով աշխատող փորձագետներ և կազմակերպություններ: Բացի այդ, կարևոր է նախագծի շրջանակներում ստեղծված արտադրանքը կիսել լայն հանրության հետ՝ դրական ազդեցություն և արձագանք ստանալու նպատակով:

Աշակերտների ներգրավվածության և մասնակցության որակը բարձրացնելու համար, որպես օրինակ, աշակերտներին առաջարկեք նրանց նշված նյութը: Միասին սահմանեք նախագծի շրջանակներում առկա կարիքներն ու այլ մանրամասներ, օրինակ՝ ի՞նչ ձևաչափով (տեսանյութ, տեքստ, լուսանկար) նրանք կտարածեն լուրերը:

Ծրագրի նպատակի, առաջադրանքների և ակտիվությունների նմուշ

Նպատակ. լրագրողական նյութեր ստեղծելու ճանապարհով դեռահասների մոտ զարգացնել գրելու, պատմելու և տեխնիկական հմտությունները՝ նպաստելով նրանց ձևավորմանը որպես ակտիվ քաղաքացիների:

Նպատակին հասնելու համար կատարեք հետևյալ առաջադրանքները.

● Քաղաքացիական հասարակության կյանքում ԶԼՄ-ների կարևորության և դերի գիտակցում՝ աշակերտների կողմից:

● Աշակերտները վերլուծում են իրենց քաղաքացիական պարտականությունները՝ լուսաբանելով հանրային խնդիրները:

● Լրագրողական նյութերի պատրաստման և տարածման ճանապարհով աշակերտների մոտ հասարակական խնդիրների լուծման խթանում:

● Տարբեր մեթոդների կիրառմամբ (տեքստ, լուսանկար, առդիո, վիդեո) աշակերտների մոտ պատմելու կարողության զարգացում:

Ակնկալվող արդյունքներ.

Աշակերտները գիտակցում են մեդիայի կարևորությունը քաղաքացիական հասարակության մեջ, գիտակցում են իրենց քաղաքացիական դերը տարբեր խնդիրների լուծման գործում՝ լուսաբանելով այս խնդիրը և իրազեկելով բնակչությանը: Սյուժեն կարող է փոխանցվել հակիրճ, հասկանալի կերպով՝ ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր կամ առդիո/տեսանյութի տեսքով:

Նպատակը, առաջադրանքները և ակտիվությունները սահմանելիս հնարավոր է օգտագործել հետևյալ հարցերը.

- Ո՞րն է ԶԼՄ-ների դերն ու ուժը հանրային խնդիրների լուծման գործում:

- Ինչպե՞ս կարող եմ դառնալ քաղաքացի լրագրող, կատարել իմ քաղաքացիական պարտքը և լինել պատասխանատու քաղաքացի:

- Ինչպե՞ս կարող եմ նպաստել տեղական համայնքի/երկրի/աշխարհի զարգացմանը:

Ակտիվությունների նմուշներ

Ակտիվություն	Ակտիվության նպատակը	Ենթաակտիվություններ
Տեղեկատվական հանդիպում. Ի՞նչ է քաղաքացիական լրագրությունը և ինչպե՞ս կարող եմ դառնալ քաղաքացի լրագրող:	Աշակերտներին ծանոթացնել քաղաքացիական լրագրության հայեցակետերին և տեղեկատվություն տրամադրել այն հնարավորությունների մասին, որոնք թույլ են տալիս նրանց դառնալ քաղաքացի լրագրող:	*Ուսուցիչը պլանավորում է տեղեկատվական հանդիպում, հրավիրում է ԶԼՄ-ներում աշխատող անձանց, ովքեր կվարեն հանդիպումը և կկիսվեն իրենց փորձով աշակերտների հետ: *Պլանավորեք հանդիպում և հրավիրեք աշակերտներին: *Հանդիպման համար սենյակի և համապատասխան սարքավորումների ընտրություն/պատրաստում:
Կինոֆիլմի (All the President's Men (1976)) ցուցադրում	Ֆիլմի դիտման շնորհիվ լրատվամիջոցների ուժի, դերի/գործառույթի ըմբռնում աշակերտների կողմից:	* Ֆիլմի ցուցադրության կազմակերպչական հարցերի լուծում (աշակերտների հրավիրում, տեղերի ամրագրում, համապատասխան տեխնիկական սարքավորումների տրամադրում): *Ֆիլմի ցուցադրություն/քննարկում (տե՛ս Հավելված ,1 քննարկման հարցերի համար):
Հանդիպում Լրագրողական էթիկայի խարտիայի ներկայացուցչի հետ	Աշակերտների իրազեկվածություն՝ լրագրողական էթիկայի նորմերի և որպես քաղաքացի լրագրող՝ իրենց իրավունքների վերաբերյալ:	*Ուսուցիչը աշակերտներին ներկայացնում է էթիկայի խարտիան և նպատակը: *Հյուրի հրավեր կամ այց Լրագրողական էթիկայի խարտիա: * Հանդիպման կազմակերպում: *Անհրաժեշտության դեպքում հանդիպման համար տարածքի և տեխնիկական սարքավորումների պատրաստում:

Հանդիպում իրավաբանի հետ. Ինչպե՞ս ստանալ հանրային տեղեկություն	Աշակերտներին ծանոթացնել հանրային տեղեկատվության տեսակներին և տեղեկություն տրամադրել պետական մարմիններից հանրային տեղեկատվություն պահանջելու կանոնների և միջոցների մասին:	* Աշակերտներին ծանոթացնել հանրային տեղեկատվության տեսակներին և տրամադրել հանրային ինֆորմացիա պահանջելու վերաբերյալ լրատվություն: *Իրավաբանի հրավեր: *Իրավաբանի հետ հանդիպման կազմակերպում: *Հանդիպման համար անհրաժեշտ տարածքի և տեխնիկական սարքավորումների պատրաստում: Անհրաժեշտ ռեսուրսներ. - Ի՞նչ է նշանակում հանրային ինֆորմացիա: (http://csb.gov.ge/navigations/%E1%83%A1%E1%83%90%E1%83%AF%E1%83%90%E1%83%A0%E1%83%9D-%E1%83%A1%E1%83%90%E1%83%9B%E1%83%A1%E1%83%90%E1%83%AE%E1%83%A3%E1%83%A0%E1%83%98%E1%83%A1-%E1%83%91%E1%83%98%E1%83%A3%E1%83%A0%E1%83%9D/%E1%83%A1%E1%83%90%E1%83%AF%E1%83%90%E1%83%A0%E1%83%9D-%E1%83%98%E1%83%9C%E1%83%A4%E1%83%9D%E1%83%A0%E1%83%9B%E1%83%90%E1%83%AA%E1%83%98%E1%83%90/) - Օրենք հանրային ինֆորմացիայի վերաբերյալ (http://service.court.ge/public/matsne.pdf)

Աշխատանքային հանդիպում(ներ)՝ ուսուցչի մասնակցությամբ	Աշակերտներին ծանոթացնել համայնքում առկա խնդիրների բացահայտման և հետազոտությունների պլանավորման ուղիների հետ:	* Նախագծին մասնակցելու ցանկություն ունեցող աշակերտների ցուցակագրում: * Աշակերտների հետ հանդիպման պլանավորում, հանդիպման մասին տեղեկատվության տրամադրում: * Ուսուցչի ծանոթացում հետազոտության մեթոդներին: * Աշակերտական խմբերի ձևավորում: * Աշակերտների կողմից հետազոտությունների անցկացման ժամանակահատվածի, լսարանի և ձևաչափի որոշում: * Աշակերտների խմբերի կողմից հետազոտության թիրախների և խնդիրների ձևավորում: Առարկայական ինտեգրում՝ աշխարհագրություն Պահանջվող ռեսուրս. - Ինչպե՞ս իրականացնել հետազոտություն: - http://css.ge/wp-content/uploads/2019/07/raodenobrivi_kvlevis_meTodebis_saxelomzgv.pdf (էջ 25-33)
Սեմինար. Ինչպե՞ս լուսաբանել պատմությունը:	Աշակերտներին ծանոթացնել լրատվամիջոցների տեսակների և տարբեր լրագրողական ժանրերի առանձնահատկություններին (հոդված, տեսանյութ, աուդիո, լուսանկար):	*Լրատվամիջոցներում աշխատանքի փորձ ունեցող անձի հրավեր, լրագրող/աշակերտների այց ցանկացած լրատվամիջոց: *Հանդիպման համար սենյակի և համապատասխան սարքավորումների պատրաստում:
Լրատվասենյակի ստեղծում և դերերի բաշխում	Լրատվասենյակի ստեղծում և դերերի բաշխում աշակերտների միջև:	* Նախագծին մասնակցող աշակերտների հանդիպման կազմակերպում:

		*Ծանոթացում լրատվասենյակում աշխատանքի սկզբունքին: * Դերերի բաշխում: Պահանջվող ռեսուրս. -Ինչպե՞ս է աշխատում լրատվասենյակը: (https://egyankosh.ac.in/bitstream/123456789/57074/1/Unit%203.pdf – (անգլերեն)) Առարկայական ինտեգրում՝ Անգլերեն
Հետազոտության անցկացում	Համայնքում առկա խնդիրների բացահայտում, որոնք լուսաբանելու են քաղաքացի լրագրողները/աշակերտները:	*Հարցազրույց ռեսպոնդենտների հետ, տվյալների հավաքագրում: *Տվյալների վերլուծություն: *Լրատվասենյակի ուսումնասիրության արդյունքում բացահայտված խնդիրների լուսաբանման պլանավորում՝ թեմաների և գործառույթների բաշխում: Առարկայական ինտեգրում՝ ԻՍՏ/ԼՀՏ
Բլոգի/YouTube ալիքի/սոցիալական մեդիայի էջերի ստեղծում	Լրատվական հարթակ(ներ)ի ստեղծում, որտեղ կտեղադրվեն քաղաքացի լրագրողների/աշակերտների կողմից պատրաստված լրագրողական նյութեր:	* Լրագրողների ժողովի կազմակերպում: * Սոցիալական ցանցերում էջեր ստեղծելու հրահանգներ աշակերտներին: * Սոցցանցերի էջերի ստեղծում: * Սոցիալական մեդիայի էջերի անվանման, լոգոյի նախագծում և ստեղծում: Առարկայական ինտեգրում՝ Պատմություն

		Պահանջվող ռեսուրսներ. - Ինչպե՞ս ստեղծել էջ Facebook-ում: (https://www.youtube.com/watch?v=26EWhcbPldU) - Ինչպե՞ս ստեղծել YouTube ալիք: (https://www.youtube.com/watch?v=lios87YN8JU) - Բլոգ ստեղծելու հրահանգներ (http://www.ict.tpdc.ge/video/48?ch=162)
Մեդիա արտադրանք ստեղծելու համար անհրաժեշտ նյութերի հավաքագրում (լուսանկարներ, հարցազրույցներ, տեղեկատվություն)	Մեդիա արտադրանքի պատրաստման աշխատանքների մեկնարկում:	*Հարցազրույցների պլանավորում և ձայնագրում: *Մեդիա արտադրանքի համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրում:
Վիդեո մոնտաժի ուսուցման սեմինար	Աշակերտներին սովորեցնել տեսամոնտաժման հիմնական տեխնիկան և հավաքագրված նյութերի հիման վրա պատրաստել տեսահաշվետվություններ:	*Տեսանյութերի մոնտաժմանը տիրապետող անձի հրավեր: *Հետաքրքրված աշակերտների համար սեմինարի կազմակերպում: *Հանդիպման համար անհրաժեշտ տարածքի և տեխնիկական սարքավորումների պատրաստում (նախընտրելի է սեմինարն անցկացնել համակարգչային լաբորատորիայում): Առարկայական ինտեգրում՝ ԻUS/ԼՀS Պահանջվող ռեսուրսներ.

		- Ապլիկացիաներ տեսանյութերի մոնտաժման համար (https://www.mediachecker.ge/ka/resursebi/article/65865-8-aplikacia-romelic-shegidzliath-videos-samontazhod-gamoiyenoth)
Աշխատանք՝ լրագրողական արտադրանքի վրա	Համայնքի խնդիրների և հոգսերի վերաբերյալ աշակերտների կողմից մեդիա արտադրանքի ստեղծման աշխատանքների ավարտ:	*Լրատվասենյակում բաշխված դերերի համաձայն մեդիա արտադրանքի ստեղծում/խմբագրում: * Ստեղծված մեդիա արտադրանքները սոցիալական մեդիա/բլոգ ներբեռնում:
Եզրափակիչ միջոցառում՝ լրագրողական նյութերի ներկայացում	Ծրագրի ամփոփում և հետագա քայլերի պլանավորում:	* Եզրափակիչ միջոցառման կազմակերպում՝ համապատասխան լսարանի կամ տեխնիկական սարքավորումների պատրաստում: * Միջոցառման ներկաների (համայնքի ներկայացուցիչներ, ԶԼՄ-ների ներկայացուցիչներ, դպրոցական համայնքի անդամներ, անհրաժեշտության դեպքում, տեղական ինքնակառավարման ներկայացուցիչների) հրավեր: * Միջոցառմանը հանդես եկող բանախոսների ընտրություն: * Շնորհանդեսին հաջորդող քննարկում / վերանայում: * Ապագա պլանների կազմում: * Հնարավոր նոր համագործակցությունների հաստատում:

Գործողությունների պլան (Ժամանակի և պատասխանատու անձանց միջև ակտիվությունների բաշխում՝ ըստ անհրաժեշտության)

Ակտիվությունների ցանկ	
1. Տեղեկատվական հանդիպում. Ի՞նչ է քաղաքացիական լրագրությունը և ինչպե՞ս կարող եմ դառնալ քաղաքացի լրագրող:	8. Հետազոտության անցկացում
2. Ֆիլմի ցուցադրություն (All the President's Men (1976)):	9. Բլոգի/YouTube ալիքի/սոցիալական մեդիայի էջերի ստեղծում
3. Հանդիպում Լրագրողական էթիկայի խարտիայի ներկայացուցչի հետ:	10. Մեդիա արտադրանքի ստեղծման համար անհրաժեշտ նյութերի ժողովածու (լուսանկարներ, հարցազրույցներ, տեղեկատվություն):
4. Հանդիպում իրավաբանի հետ. Ինչպե՞ս ստանալ հանրային լրատվություն:	11. Վիդեո մոնտաժի ուսուցման սեմինար:
5. Սեմինար(ներ) ուսուցչի մասնակցությամբ:	12. Աշխատանք՝ լրագրողական արտադրանքի վրա:
6. Սեմինար. Ինչպե՞ս լուսաբանել պատմությունը:	13. Եզրափակիչ միջոցառում. Լրագրողական նյութերի շնորհանդես:
7. Լրատվասենյակի ստեղծում և դերերի բաշխում:	

III փուլ - Համագործակցություն և ծրագրի իրականացում

Առաջարկ ուսուցչին

Խնդրեք աշակերտներին ծրագրի մասին լուրերը տարածել դպրոցական համայնքում: Ծրագրին մասնակից աշակերտները պետք է մշտապես համագործակցեն տեղական և դպրոցական համայնքի անդամների հետ, որպեսզի անհրաժեշտության դեպքում կարողանան կարևոր տեղեկություններ տրամադրել առկա խնդիրների մասին, որոնք հետագայում կարող են լուսաբանվել նախագծում:

Շահագրգիռ կողմերի վերլուծություն. պոտենցիալ/հավանական աջակիցներ

Համամասնակիցների որոնում

Նախագիծը նախատեսում է համագործակցություն դպրոցական համայնքի անդամների հետ, նրանց անմիջական ներգրավում մեդիա արտադրանքի ստեղծման գործընթաց՝ հանրային խնդիրների լուծման նպատակով: Բացի այդ, կարևոր է համագործակցել փորձագետների, իրավաբանների, լրագրողների հետ, ովքեր անհրաժեշտության դեպքում իրենց փորձն ու գիտելիքները կկիսեն նախագծին մասնակից աշակերտների հետ: Կարևոր է շփվել և համագործակցել տեղական ինքնակառավարման մարմինների հետ, որպեսզի նրանցից ստանանք այն տեղեկատվությունը, որն անհրաժեշտ կլինի ընտրված խնդիրը լուսաբանելու համար: Ցանկալի է նաեւ համագործակցություն մարզային լրատվամիջոցների հետ:

Հանդիպումների կազմակերպում

Նախագծով նախատեսվում է նաև հանդիպումների կազմակերպում տարբեր մասնագետների հետ, ովքեր իրենց փորձից բխող գիտելիքներով կօգնեն նախագծում ընդգրկված աշակերտներին:

Դպրոցական ինքնակառավարման ներգրավում

Դպրոցական նախագծերն ավելի արդյունավետ կլինեն, եթե ներգրավվի ամբողջ դպրոցը, ինչում դպրոցի տնօրինությունը իսկապես կարող է օգնել ձեզ: Դասարանի ներկայացուցիչը կարող է ինքնակառավարման այլ անդամներին տեղեկատվություն տրամադրել ծրագրված հանդիպումների և թեմաների լուսաբանման մասին, ինչը կբարձրացնի աշակերտների մասնակցությունն ու ներգրավվածությունը:

ՁԼՄ-ների հետ աշխատող կազմակերպություններ

Առաջարկում ենք նշված հարցերով աշխատող կազմակերպությունների ցանկ, որոնց հետ հնարավոր է համագործակցության հաստատում.

- Վրաստանի լրագրողական էթիկայի խորհուրդ
- Վրաստանի հանրային պաշտպանի գրասենյակ
- ՁԼՄ-ների շահերի պաշտպանության կոալիցիա/դաշինք
- Վրաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա

IV փուլ. Կայունություն

Առաջարկ ուսուցչին

Աշակերտների մասնակցությամբ պարզեք այն միջոցները, որոնք կարող են նպաստել ծրագրի կայունությանը: Պլանավորեք ապագա համագործակցություն՝ համայնքի ներկայացուցիչների հետ:

Ծրագրի գնահատում

Նախագիծը գնահատելու համար նախնառաջ կարևոր է մասնակից աշակերտների հետ քննարկել, թե ինչ խոչընդոտների եք հանդիպել և ինչպես եք դրանք հաղթահարել, ի՞նչ արդյունքներ եք ստացել ստեղծած մեդիա ռեսուրսների և դրանց բաշխման շնորհիվ, ի՞նչ կարելի է ուղղել ապագայում:

Ծրագրի կայունությունը

Ծրագրի կայունության համար կարևոր է մեկնարկած աշխատանքների շարունակականությունը: Ուսուցիչը պետք է աշակերտներին առաջարկի, թե ինչպե՞ս կարելի

է շարունակել համայնքում առկա կարևոր հարցերի/նորությունների լուսաբանումը և ի՞նչ միջոցներով տարածել դրանք՝ բլոգի, յութուբյան ալիքի կամ սոցիալական ցանցում ստեղծված էջի տեսքով:

Ակնկալվող ռիսկեր.

- Նախագծի շրջանակներում պոտենցիալ հարցվողների թերահավատություն, հրաժարում՝ հարցազրույցի կամ տեղեկատվության տրամադրումից:

- Մասնագետների հետ առցանց հանդիպումների անցկացում, քանի որ վերջիններս չեն կարող գալ երկրի որևէ գյուղ կամ քաղաք:

Հավելված 1

Հարցեր քննարկման համար.

1. Ի՞նչ հույզեր առաջացրեց ֆիլմը:

2. Ի՞նչ եք կարծում, ո՞րն էր ֆիլմի գլխավոր գաղափարը. փոխանցեք մեկ արտահայտությամբ / նախադասությամբ / բառով ...

3. Լրագրողի ի՞նչ որակներ կարելի է տեսնել ֆիլմում:

4. Ելնելով ֆիլմի սյուժեից՝ ի՞նչ դերակատարում ունի մեդիան ժողովրդավարական գործընթացներում:

5. Ո՞ր դրվագն եք ամենաշատը հիշում: Ինչո՞ւ:

6. Ո՞րն էր լրագրության և լրատվամիջոցների մասին ֆիլմից քաղած ձեր բացահայտումը:

7. Ի՞նչ սովորեցրեց ֆիլմը: Եվ որտե՞ղ եք կիրառելու ֆիլմից ստացած գիտելիքները:

Գնահատում ըստ սոլոտաքսոնոմիայի

	Հասարակություն	Ժողովրդավարություն	Քաղաքացիական մասնակցություն	Կայուն զարգացում
Հարաբերական մակարդակ	Աշակերտը բացատրում է լրագրողական նյութեր ստեղծելիս, համայնքում առկա մարտահրավերների վերաբերյալ տարբեր ակտորներրի հետ առողջ շփման կարևորությունը: Հասկանում է վստահության կարևորությունը մարդկանց/սոցիալական խմբերի/հաստատությունների հետ համագործակցության տեսանկյունից:	Աշակերտը վերլուծում է ԶԼՄ-ների դերը ժողովրդավարական հասարակության ձևավորման գործում, հղում է անում ԶԼՄ-ների դերի վրա՝ ժողովրդավարական զարգացման գործում: Վերլուծում է մարդու իրավունքների կարևորությունը ժողովրդավարական հասարակության մեջ, ապահովում է հանրային խնդիրների լուսաբանման թափանցիկությունը և անհրաժեշտության դեպքում, համագործակցում տեղական իշխանությունների հետ:	Աշակերտը կարևորում է համայնքում առկա սոցիալական խնդիրները և փորձում է նպաստել դրանց լուծմանը՝ պատրաստելով լրագրողական նյութեր: Միաժամանակ հիմնավորում է յուրաքանչյուր քաղաքացու պատասխանատվությունն ու դերը ընդհանուր հասարակական բարեկեցության հասնելու գործընթացում:	Աշակերտը հիմնավորում է կայուն զարգացման կարևորությունը: Բացատրում է, թե ինչ է նշանակում կայուն զարգացում և ընդգծում այդ առումով համայնքի մարտահրավերները:

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

Թեմա	Քաղաքական մշակույթ
Խնդիր	Վրաստանի եվրաինտեգրում
Նպատակ	Վրաստանի եվրաինտեգրման գործընթացի վերաբերյալ իրազեկվածության բարձրացում աշակերտների շրջանում, եվրոպական արժեքների արժևորում
Միջառարկայական ինտեգրում	Աշխարհագրություն, Պատմություն

Ծրագրի համապատասխանությունը քաղաքացիական թիրախային հասկացություններին

Հասարակություն	Ժողովրդավարություն	Քաղաքացիական մասնակցություն	Կայուն զարգացում
• կքննարկեն Եվրամիության դերը՝ անհատի զարգացման տեսանկյունից, • կսովորեն արտահայտել սեփական կարծիքն ու կնպաստեն ասսերտիվ միջավայրի ստեղծմանը։	• ժողովրդավարության սկզբունքները կկապեն կյանքում հանդիպող իրավիճակների հետ, • կքննարկեն Եվրամիության դերը ժողովրդավարական պետություն կառուցելու և մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից, • կգիտակցեն ինստիտուտների դերը ժողովրդավարության կառուցման տեսանկյունից։	• կհասկանան մասնակցության կարևորությունը և կտեսնեն իրենց դերն ու նշանակությունը համայնքում առկա դժվարությունների նվազեցման գործընթացում, • կնպաստեն հանրային իրազեկվածության բարձրացմանը, • կքննարկեն, թե ինչպես զարգացնեն երկիրը։	• կարժևորեն տեղական և միջազգային գործընթացների կարևորությունը, • կարժևորեն Եվրամիության դերը գլոբալ խնդիրների լուծման գործում։

բագրի կապը ժողովրդավարական մշակույթի իրավասությունների հետ



I փուլ - Խնդիրը բացահայտելու և հիմնավորելու փուլ

Երաշխավորություն ուսուցիչներին՝

Դպրոցը պետք է զարգացնի դեռահասի կարողությունը՝ ճիշտ սահմանելու իր երկրի պետական, մշակութային, տնտեսական և քաղաքական շահերը և հնարավորություններ ստեղծի նրա՝ որպես քաղաքացու, բարենպաստ որոշումներ կայացնելու և գործուն քայլեր ձեռնարկելու (Ընդհանուր կրթության ազգային նպատակներ) գործընթացում:

Ներկայացված նախագիծը կօգնի աշակերտներին ըմբռնել եվրոպական արժեքները, ուսումնասիրել առաջին Եվրոպական միության ստեղծման, ընդլայնման և զարգացման փուլերը, քննարկել Վրաստանի՝ Եվրամիությանն անդամակցելու անհրաժեշտությունը:

Այս գործընթացում կարևոր է ձեր դերը՝ որպես գործընթացի աջակցողի և վարողի: Աջակցեք աշակերտների նախաձեռնություններին, խրախուսեք նրանց որակյալ կատարել այն ակտիվությունները, որոնք առաջարկվում են ծրագրի տարբեր փուլերում:

Խնդրի ձևակերպման նմուշ

1992 թվականին Եվրամիավորումը (հետագայում՝ Եվրամիություն) ճանաչեց Վրաստանը որպես անկախ պետություն և դրեց հարաբերությունների սկիզբը: Եվրամիության և Վրաստանի միջև շոշափելի համագործակցությունն ակտիվացավ 1999 թվականից:

Եվրոպական ինտեգրման ճանապարհին շատ կարևոր տարեթվեր կան: Դրանցից հատկանշականը 2014 թվականի հունիսի 27-ին ստորագրված համաձայնագրերն են՝ Վրաստան-Եվրամիությյուն ասոցացման և Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու (DCFTA) մասին, որոնք ուժի մեջ են մտել 2016թ., իսկ 2017 թ.-ից Վրաստանի քաղաքացիները ԵՄ/Շենգեն գոտում օգտվում են անայցեգրային կարգից:

Այս դժվարին և մարտահրավերներով լի ճանապարհին ամենակարևոր քայլն արվեց 2022 թվականի մարտի 3-ին, երբ Վրաստանը հայտ ներկայացրեց Եվրամիությանն անդամակցելու համար: Ներկա փուլում մեր երկիրը սպասում է թեկնածուի կարգավիճակին:

Այսօր Վրաստանի եվրոպական և եվրատլանտյան ինտեգրումը բախվում է բազմաթիվ խոչընդոտների: Հակաարևմտյան քարոզչությունը և բացահայտ ռուսամետ կուսակցությունները փորձում են բնակչության մեջ նիհիլիստական վերաբերմունք սերմանել:

Այնուամենայնիվ, բնակչության ճնշող մեծամասնությունը կողմ է Եվրամիությանն անդամակցելուն: NDI հետազոտության 2022 թվականի դեկտեմբերի տվյալների համաձայն՝ հարցված բնակչության 81%-ը կողմ է Վրաստանի անդամակցությանը Եվրամիությանը: Սակայն այս տվյալները, պայմանավորված վերոնշյալ պատճառներով, լիցքաթափվելու տեղիք չեն տալիս:

Եվրոպական ինտեգրացիոն գործընթացների կարևորությունն ըմբռնելու քայլեր

- Եվրոպան Երկրորդ համաշխարհային պատերազմից մինչև տնտեսական վերելք:
- Ինչպե՞ս պողպատի և ածխի միությունը վերածվեց ամենաուժեղ քաղաքական-տնտեսական միության:
- Որտե՞ղ և ինչպե՞ս են որոշումներ կայացվում Եվրամիություն նոր անդամների ընդունման և այլ կարևոր հարցերի լուծման վերաբերյալ:
- Ի՞նչ գործոններ են պայմանավորում երկրի եվրոպական ընտրությունը:
- Ինչո՞ւ է բնակչության մեծամասնությունն ընտրում Եվրամիությանն ինտեգրումը:
- Ինչպե՞ս կարող է անհատ քաղաքացին նպաստել երկրի Եվրամիություն ինտեգրման գործընթացի արագացմանը:
- Ինչպե՞ս և ինչո՞ւ է Եվրամիությունն օգնում Վրաստանին տարբեր ուղղություններով (ժողովրդավարության ամրապնդում, գյուղատնտեսություն, շրջակա միջավայրի պաշտպանություն, քաղաքացիական հասարակություն, կայուն զարգացում, ինստիտուցիոնալ զարգացում և այլն):
- Ինչո՞ւ են հակաարևմտյան քարոզչությունը և ռուսական նարատիվները հակադրվում երկրի եվրոպական կուրսին:
- Ի՞նչ պահանջներ պետք է կատարվեն Եվրամիությանն անդամակցության համար:
- Ի՞նչ խնդիրներ են արդիական գյուղում/համայնքում/քաղաքում և ինչպե՞ս կարող է Վրաստանի անդամակցությունը Եվրամիությանը օգնել դրանց լուծման հարցում:
- Ի՞նչ է վիզայի ազատականացումը:
- Ի՞նչ է ներառում Ասոցացման համաձայնագիրը և DCFTA-ն:
- Պահանջվող ռեսուրսներ՝ պրոյեկտոր, նոութբուք (տեսա/ֆոտո ռեսուրսներ ցուցադրման համար):

Մենք բոլորս կարող են մեր մեկ աղյուսը դնել Վրաստանի եվրոպական ապագայի համար: Իրազեկված քաղաքացուն դժվար է մանիպուլյացիայի կամ քարոզչության զոհ դարձնել: Երկրի զարգացման համար կարևոր է ապագա սերունդը, որը գիտի, թե ինչ դրական տեղաշարժ է ենթադրում եվրոպական գիտելիքն ու փորձը, ինչպե՞ս է Եվրամիությունը օգնում Վրաստանին տարբեր ուղղություններով, որո՞նք են եվրոպական և վրացական արժեքները, և երկրի համար ի՞նչ օգուտ կարող է ունենալ լիարժեք ինտեգրումն այնպիսի քաղաքական-տնտեսական միությանը, ինչպիսին Եվրամիությունն է:

Ռեսուրսներ հիմնախնդրի բացահայտման և նախագծի ակտիվությունների իրականացման համար

- Անիմացիա՝ Եվրամիության պատմություն
- Անիմացիա՝ Եվրամիության կառուցվածք
- Անիմացի՝ Եվրամիության անդամակցության չափանիշներ
- 10 առասպել Եվրամիության մասին
- Հոդված՝ «Ինչո՞ւ Եվրոպա»
- Տեղեկատվություն՝ Վրաստան և Եվրամիություն
- Ուսումասիրություն՝ ապատեղեկատվության տարածում Վրաստանում, պետության մոտեցումն ու պայքարի ուղիները
- Տեղեկատվություն՝ Ի՞նչ է Եվրամիությունը
- Անիմացիա՝ Ի՞նչ է DCFTA
- Անիմացիա՝ ասոցացման համաձայնագրի ընդհանուր ակնարկ
- Իլիա Ճավճավաձե՝ «Ինչո՞ւ Եվրոպա»
- Ինչպե՞ս ստեղծել Google հարցաթերթիկ
- Օրագրի նմուշ

II փուլ – Նպատակներին հասնելու և առաջադրանքները հաղթահարելու անհրաժեշտ ակտիվությունների սահմանում

Առաջարկ ուսուցչին

Երաշխավորություն ուսուցիչներին՝

Առաջարկվող նախագիծը խորհրդատվական բնույթ է պարունակում: Վրաստանի տարբեր շրջաններում կան տարբեր կարիքներով, հնարավորություններով և ռեսուրսներով դպրոցներ: Հետևաբար, առաջարկվող նպատակները, առաջադրանքները կամ ակտիվությունները հարմարեցրեք հատուկ ձեր աշակերտների կարիքներին և տեսլականներին: Նշված նախագծի շրջանակներում կարևոր է ընդգրկել ծնողներին, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներին, ակտիվ քաղաքացիներին, ոլորտի մասնագետներին, ինչպես նաև եվրոպական երկրներում որոշ ժամանակահատված ապրած մարդկանց և այլն: Վերջիններիս հրավիրումն ու ներգրավումը բազմակողմանի կդարձնի նախագծում աշխատելու գործընթացը, կնպաստի առաջնային աղբյուրից հավաստի և ստուգված տեղեկատվության ստացմանը և դրա հետագա կիրառմանը:

Աշակերտներին հնարավորություն տվեք ստեղծագործաբար մոտենալ նախագծի տարբեր փուլերին, խրախուսեք նրանց նախաձեռնությունների մեջ նոր ակտիվություններ ներբերելու տեսանկյունից:

Ծրագրի նպատակի, առաջադրանքների և ակտիվությունների նմուշ

Նպատակ. Աշակերտների շրջանում Վրաստանի եվրաինտեգրման գործընթացի մասին իրազեկվածության բարձրացում, եվրոպական արժեքների գիտակցում:

Նպատակին հասնելու համար կատարեք հետևյալ առաջադրանքները.

- Եվրամիությունը՝ որպես ամենահաջողակ տնտեսական-քաղաքական միության ճանաչում,

- Եվրամիությունում որոշումներ կայացնող կառույցների ուսումնասիրում,

- Վրաստանի զարգացման գործում Եվրամիության դերի գիտակցում,

- Եվրամիությանը երկրի ապագա անդամակցությանն անհրաժեշտ քայլերի սահմանում:

Ակնկալվող արդյունքներ.

Աշակերտները իրազեկված են Եվրամիության՝ որպես ամենահզոր տնտեսական և քաղաքական միության մասին, հասկանում են եվրոպական արժեքները, պաշտպանում են երկրի շահերը և վճռականորեն աջակցում եվրոպական ինտեգրմանը: Աշակերտները տիրապետում են Եվրամիությունում որոշումներ ընդունող կառույցների գործունեության սկզբունքներին:

Նպատակ, առաջադրանքներ և ակտիվություն սահմանելիս հնարավոր է օգտագործել հետևյալ հարցերը.

• Ինչպե՞ս և ինչո՞ւ է Եվրամիությունը օգնում Վրաստանին՝ որպես ոչ անդամ երկրի, ինստիտուցիոնալ զարգացման տեսանկյունից:

• Ինչո՞ւ է Եվրամիությունը վարկաբեկվում արժեքների և ավանդույթների հետ կապված հարցերում:

• Ինչպե՞ս կարող եմ նպաստել երկրի եվրոպական ուղուն աջակցելու մեջ:

• Ո՞վ է կարևոր որոշումներ կայացնում ԵՄ-ում:

Ակտիվությունների նմուշներ

Ակտիվություն	Ակտիվության նպատակը	Ենթաակտիվություններ
Հոդվածի/բլոգի պատրաստում հետևյալ թեմայով՝ «Եվրամիություն. անցյալ և ներկա»	Աշակերտները պետք է ստանան հիմնային գիտելիքներ Եվրամիության ստեղծման, ընդլայնման և ինստիտուցիոնալիզմի վերաբերյալ	* Անհրաժեշտ գրականության ընտրություն, * Գրականության մշակում, *Դասարանում հոդվածով/բլոգով կիսվելու անհրաժեշտություն:
Հետազոտություն հետևյալ թեմայով՝ «Առասպել և իրականություն Եվրամիության մասին»	Աշակերտները պետք է կարողանան բացահայտել Եվրամիության մասին համայնքում տարածված սխալ և ճիշտ պատկերացումները և սահմանել հետագա քայլերը	* Հետազոտող թիրախային խմբի ընտրություն (կոնկրետ ո՞ւմ հետ կիրականացվի հետազոտությունը), * Հետազոտության մեթոդի ընտրություն, *Հետազոտության խնդրի հստակեցում և հարցաթերթիկների պատրաստում, *Ուղղորդային հետազոտությունների իրականացում և արդյունքների վերլուծություն. Ռեսուրսներ. Ինչպե՞ս ստեղծենք Google-ի հարցաթերթիկ
Կլոր սեղան. ի՞նչ քայլեր ձեռնարկենք ԵՄ ինտեգրման գործընթացն արագացնելու համար	Աշակերտները պետք է կարողանան հասկանալ Եվրամիությանն արագ ինտեգրման ուղղությամբ իրականացվելիք բարեփոխումները	* Կլոր սեղանի ձևաչափի համաձայնեցում, * Հյուրերի հրավիրում (հյուի կարգավիճակում կարող է լինել տեղի լրագրող, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ, ինչպես նաև երիտասարդ, ով օգտվել է ERASMUS+ փոխանակման ծրագրից և այլն), * Օրակարգի սահմանում,

		* Կլոր սեղանի արդյունքների փոխանակում (սյուժեի կամ տեղեկատվական հոդվածի պատրաստում):
Սյուժեի պատրաստում. Եվրոպան իմ գյուղում / համայնքում / քաղաքում / մարզում և Իմ գյուղը / համայնքը / քաղաքը / տարածաշրջանը՝ Եվրոպայում	Աշակերտները պետք է որոշեն, թե ինչպես է Եվրամիությունն ուղղակիորեն օգնում իրենց գյուղին, քաղաքին (շրջակա միջավայրի պահպանություն, ենթակառուցվածքներ և այլն) և որոշեն, թե որ ապրանքն է արտահանվում իրենց բնակելի շրջանից՝ ԵՄ երկրներ:	* Ֆինանսավորված և իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության որոնում և մշակում, * Այնպիսի անձի/կազմակերպության ներգրավում, որն օգտվում է ԵՄ-ի նպաստներից, * Սյուժեի պատրաստում և տարածում: Տեխնիկական սարքավորումներ. Նոութբուք, պրոյեկտոր Ռեսուրսներ: https://eu4georgia.eu/ka/ https://eu4georgia.eu/ka/enpard/
Թռուցիկների պատրաստում և տարածում համայնքում	Աշակերտները պետք է նպաստեն սեփական համայնքում Եվրամիության մասին իրազեկվածության բարձրացմանն ու Եվրամիության աջակցման ծրագրերի մասին տեղեկատվության տարածմանը	* Ստացված տեսական նյութի հիման վրա թռուցիկների բովանդակության և կառուցվածքի սահմանում, * Թռուցիկում դիզայնի մշակում, * Թռուցիկում արտացոլված տեղեկատվության համադրում, * Թռուցիկների տարածում համայնքում. Տեխնիկական սարքավորումներ. Նոութբուք

		Թռուցիկներ պատրաստելու համար, կարող եք օգտվել հետևյալ կայք-էջից՝ www.canva.com
Ինչպե՞ս են կայացվում որոշումները Եվրամիությունում. Վիրտուալ շրջագայություն	Աշակերտները բացահայտում են Եվրամիության որոշումներ կայացնող կառույցներն ու գիտակցում վերջիններիս դերը	Դուք շահագրգռված եք պարզել, թե որտե՞ղ և ինչպե՞ս են կայացվում որոշումները Եվրամիությունում: Որոշեք կազմակերպել վիրտուալ շրջագայություն՝ Եվրակառույցներին ծանոթանալու նպատակով: Ծանոթացեք եվրոպական կառույցներին, դրանց իրավասությանը, կազմավորման կարգին և լրացրեք Հավելված 1-ում տրված աղյուսակը: ⬇ Աղյուսակը լրացնելիս ուշադրություն դարձրեք այն կառույցներին, որոնք մասնակցել են Վրաստանի՝ Եվրամիությանն անդամակցելու դիմումի քննարկմանը և կարգավիճակ տրամադրելու որոշմանը: Ռեսուրսներ. (http://old.infocenter.gov.ge/euinfo-institutions/#1 - Եվրակառույցներ https://www.youtube.com/watch?time_continue=136&v=o7oEB9dTuOc&feature=emb_title Եվրամիության կառուցվածքը
Միջսերունդների երկխոսություն. Եվրոպան իմ և քո աչքերով	Աշակերտները պետք է կարողանան լսել և կիսել տարբեր սերունդների դիրքորոշումը/տեսակետները	*Բանավեճի օրակարգի և ձևաչափի սահմանում, * Բանավեճային հարցերի պատրաստում, * Տարբեր սերունդների ներկայացուցիչների հրավիրում, * Բանավեճի համար տարածքի կազմակերպում:
Բանավեճ. Ինչո՞ւ Եվրոպա (քաղաքական բանավեճի ձևաչափ)	Աշակերտները պետք է կարողանան հիմնավորել եվրոպական ինտեգրման անհրաժեշտությունը՝ օգտագործելով քննադատական մտածողության հմտությունները	* Բանավեճի բանաձևային մասի համաձայնեցում, * Բանավեճի կանոնների համաձայնեցում, * Բանավեճի համար տարածքի նախապատրաստում,

		* Բանավեճի անցկացում։ Առաջարկվող ուղղություններ. ա. Ինչո՞ւ Եվրոպա՝ կրթության ուղղությամբ, բ. Ինչո՞ւ Եվրոպա՝ առևտրի և տնտեսության ուղղությամբ, գ. Ինչո՞ւ Եվրոպա՝ գյուղատնտեսության ուղղությամբ, դ. Ինչո՞ւ Եվրոպա՝ քաղաքական աջակցության և արդարության բարելավման ուղղությամբ, ե. Եվրոպա՝ նպատակ թե՞ միջոց։ Համաշխարհային դպրոցական ոճով բանավեճերի անցկացման սկզբունքներն ու հրահանգները կարող եք գտնել հետևյալ հղումով՝ https://www.calameo.com/read/0069180749859be53b669 Կարլ Պոպերի ոճով բանավեճերի կառուցվածքը տրված է հետևյալ հղումով. http://taoba.edu.ge/ wp-content/uploads/2018/10/բանավեճերի-ծեսեր-PDF-ֆայլ.pdf http://www.osgf.ge/files/2017/Publications/debate.pdf (քաղաքական բանավեճերի ձևաչափ)
Եվրոպական խորհրդի մոդելացված նստաշրջան. Եվրամիության ապագա ընդլայնումը	Աշակերտները պետք է կարողանան հաշվի առնել երկրի շահերը և հիմնավորել թեկնածուի կարգավիճակ տալու/Վրաստանի Եվրամիությանն անդամակցելու անհրաժեշտությունը։	* Դերերի բաշխում ըստ առաջարկվող սցենարի (տե՛ս սցենարը Հավելված 2-ում), *Վրացական պատվիրակության հաշվետու ելույթի պատրաստում, *Մոդելավորված տարածքի պատրաստում/կազմակերպում, * Բանավեճի տարածքի կազմակերպում, * Եվրոպական խորհրդի նիստի մոդելավորում.

Գործողությունների պլան (ժամանակի և պատասխանատու անձանց տրվող ակտիվությունների բաշխումն իրականացրեք ըստ անհրաժեշտության)

Ակտիվությունների ցանկ	
1. «Եվրամիություն. անցյալ և ներկա» թեմայով հոդվածի/բլոգի պատրաստում	6. Զեկույցի պատրաստում՝ «Ինչպե՞ս են կայացվում որոշումները Եվրամիությունում» թեմայի շուրջ
2. «Առասպել և իրականություն Եվրամիության մասին» թեմայի ուսումնասիրություն	7. Միջսերունդների երկխոսություն. Եվրոպան իմ ու քո աչքերով
3. Կլոր սեղան՝ «Ի՞նչ գործոններ են խանգարում Վրաստանին անդամակցել Եվրամիությանը» թեմայի շուրջ	8. Բանավեճ. Ինչո՞ւ Եվրոպա
4. Սյուժեի պատրաստում. Եվրոպան իմ գյուղում / համայնքում / քաղաքում / մարզում և Իմ գյուղը / համայնքը / քաղաքը / տարածաշրջանը՝ Եվրոպայում	9. Եվրոպայի խորհրդի մոդելավորված նիստ
5. Թռուցիկների պատրաստում և համայնքում տարածում	

III փուլ - Համագործակցություն և ծրագրի իրականացում

Առաջարկ ուսուցչին.

Երաշխավորություն ուսուցիչներին՝

Ծրագրի իրականացման երկրորդ փուլում աշակերտները կունենան ձեր աջակցության կարիքը: Օգնեք նրանց մշակել առաջարկվող ռեսուրսներն ու հայթայթել լրացուցիչ տեղեկություններ: Խնդրեք նրանց ձեր մասնակցությամբ ուսումնասիրություն անցկացնել և գտնել ձեր գյուղում/քաղաքում/տարածաշրջանում ԵՄ կողմից աջակցվող ծրագրերը:

Կապ հաստատեք անհատների, ձեռնարկատերերի, կազմակերպությունների կամ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների հետ, ովքեր տարբեր ժամանակներում մասնակցել են ԵՄ աջակցությամբ իրականացվող ծրագրերին կամ դրամաշնորհային մրցույթներին: Հրավիրեք նրանց դպրոց կամ օգնեք աշակերտներին վերջիններիս հետ հարցազրույցների ձայնագրման հարցում:

Օգնեք աշակերտներին դերերի և գործառույթների բաժանման մեջ: Պատրաստեք նրանց նախագծի եզրափակիչ/ամփոփիչ միջոցառման/մոդելավորման համար:

Ինչ վերաբերում է դպրոցական համայնքի իրազեկմանը, ապա անընդհատ տեղեկացրեք նրանց ծրագրի քայլերի մասին, օգտագործեք դպրոցի սոցիալական էջը տեղեկատվական ցուցատախտակը եւ այլն: Ծրագիրն իրականացնողների խմբում կարող եք ընտրել հասարակայնության հետ կապերի պատասխանատու աշակերտների, ովքեր ամենշաբաթյա գրառումներ կպատրաստեն ծրագրի ընթացքի մասին:

Ցանկալի է ստեղծել ծրագրի հատուկ հարթակ, որտեղ կհրապարակեք նորություններ նախագծի տարբեր փուլերի մասին:

Շահագրգիռ կողմերի վերլուծություն. պոտենցիալ աջակիցներ

Համամասնակիցների որոնում

Ծրագրի իրականացումը ենթադրում է տարբեր ռեսուրսների պատրաստում և տարածում: Ցանկացած գործունեության իրականացման ընթացքում կարող է առաջանալ հատուկ ռեսուրսներով ապահովման անհրաժեշտություն: Համագործակցեք դպրոցի տնօրինության հետ, աջակիցներ գտեք մասնավոր հատվածում և օգտագործեք վերջիններիս ռեսուրսները:

Հանդիպումների կազմակերպում

Ցանկալի է, որ աշակերտները համագործակցեն դպրոցի ուսուցիչների հետ, որոնք կարող են օգնել նրանց պլանավորել և իրականացնել ծրագրի շրջանակներում նախատեսված աշխատանքները: Արդյունավետ համագործակցություն իրականացնելու համար կարևոր է նախապես, գրավոր տեղեկացնել հրավիրված հյուրերին (ուսուցիչների, ծնողների կամ այլ շահագրգիռ անձանց) նախատեսված հանդիպումների մասին:

Դպրոցական ինքնակառավարման ներգրավում

Դպրոցական նախագծերն ավելի արդյունավետ կլինեն, եթե դրանք ներգրավեն ամբողջ դպրոցը. դպրոցի ղեկավարությունը իսկապես կարող է օգնել ձեզ այս հարցում: Դասարանի ներկայացուցիչը կարող է տեղեկացնել ինքնակառավարման մյուս անդամներին պլանավորված հանդիպումների և ակտիվությունների մասին, որոնք կբարձրացնեն աշակերտների մասնակցությունն ու ներգրավվածությունը:

IV փուլ՝ Կայունություն

Առաջարկ ուսուցչին.

Երաշխավորություն ուսուցիչներին՝

Ծրագրի սկզբում ստեղծեք նախա և հետթեստեր (տե՛ս Հավելված 3), որոնք կօգտագործեք արդյունքները ամփոփելու համար: Ինչպես նաև աշակերտների ներգրավմամբ նախանշեք այն միջոցառումները, որոնք կարող են նպաստել ծրագրի կայունությանը:

Ծրագրի գնահատում

Ծրագրի արդյունքները ամփոփելու համար սկզբում և վերջում ցանկալի է անցկացնել նախա և հետթեստեր, որոնք ցույց կտան, թե որքանով են աշակերտները հասկացել եվրահինտեգրման գործընթացների կարևորությունը և նկատել երկրի զարգացման հնարավորությունները: Բացի այդ, ծրագրի ավարտից հետո կարևոր է իրականացնել ռեֆլեքսիա, հասկանալու համար, թե ի՞նչն է հաջողությամբ պսակվել ծրագրի շրջանակներում, ի՞նչ խոչընդոտող գործոններ և մարտահրավերներ են հայտնաբերվել, ի՞նչ է պետք իրականացնել ապագայում այս դժվարություններից խուսափելու համար:

Ծրագրի կայունությունը

Ծրագրի կայունությունը՝ հիմնվելով օգտագործվող ռեսուրսների վրա, որոշվում է դպրոցում Եվրոպական խորհրդի մոդելավորման անցկացման փորձով: Ծրագրի ավարտին, կարող է ստեղծվել եվրոպական անկյուն, բանավեճային տարածք, ակումբ և այլն, որը հոգ կտանի դպրոցի շրջանակներում և համայնքում եվրահինտեգրման գործընթացների կարևորության վերաբերյալ հանրությանն իրազեկելու մասին:

Ակնկալվող ռիսկեր.

- Աշակերտների ցածր մոտիվացիան և պատրաստակամությունը ծրագրի տարբեր փուլերում ներգրավվածության տեսանկյունից.

- Ելնելով թեմայի առանձնահատկությունից՝ դպրոցական համայնքը ձեռնպահ է մնում նախագծային աշխատանքներին մասնակցելուց (օրինակ՝ հարցում):

Գնահատում ըստ սոլոտաքսոնոմիայի

	Հասարակություն	Ժողովրդավարություն	Քաղաքացիական մասնակցություն	Կայուն զարգացում
Հարաբերական մակարդակ	Աշակերտը վերլուծում է, թե ինչպես է Եվրամիությունն օգնում մարդու, հասարակության ազատ զարգացմանը և նրա կարիքների բավարարմանը (ֆիզիոլոգիական, անվտանգություն, ինքնարտահայտում):	Աշակերտը գիտակցում է Եվրամիության դերը ժողովրդավարական միջավայր ստեղծելու տեսանկյունից, քննարկում է միության դերը մարդու իրավունքների և ժողովրդավարական սկզբունքների պաշտպանության տեսանկյունից:	Աշակերտը քննարկում է իր՝ որպես ակտիվ քաղաքացու դերը հանրությանը իրազեկելու տեսանկյունից:	Աշակերտը պարզում է, թե ինչպես են Եվրամիության աջակցության ծրագրերը բարելավել միջավայրը, նա տեսնում է Եվրամիության դերը գլոբալ խնդիրների լուծման գործում:

Հավելված 1

Ինչպե՞ս են կայացվում որոշումները Եվրամիությունում. Եվրակառույցներ

Հաստատության տեսակը	Կառույցի անվանումը	Կազմավորման կարգը	Գործունեության հիմնական ոլորտները
Եվրամիության օրենսդիր մարմին			
Եվրամիության ղեկավար (գործադիր) կառուցվածքը			
Որոշումները կայացվում են երկու մակարդակով՝ նախարարներ և պետությունների ղեկավարներ			

Եվրամիության դատական իշխանություն			
Եվրամիության ֆինանսական կառուցվածք			

Հավելված 2

Եվրոպական խորհրդի նիստի մոդելավորման հրահանգներ

Հարց. Եվրամիության ընդլայնում դեպի Արևելյան և Հարավային Եվրոպա

Ուսուցման նպատակները. մասնակցելով այս մոդելավորմանը՝ աշակերտները.

- կխորացնեն իրենց գիտելիքները Եվրամիության և որոշումների կայացման ընթացակարգի մասին.
- կգիտակցեն Եվրոպայում բանակցությունների և դաշինքների հաստատման դինամիկան.
- կզարգացնեն բանակցային հմտությունները։

Հիմնական տեղեկություններ Եվրոպական խորհրդի մասին.

Եվրոպական խորհուրդը կազմված է անդամ երկրների կառավարությունների կամ պետությունների ղեկավարներից՝ Խորհրդի նախագահի և Հանձնաժողովի նախագահի հետ միասին։ Աշխատանքներին մասնակցում է Եվրամիության արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության գերագույն ներկայացուցիչը։ Եվրոպական խորհուրդը սահմանում է Եվրամիության ընդհանուր քաղաքականությունն ու առաջնահերթությունները։ Այն չունի օրենսդրական գործառույթներ։ Եվրախորհուրդը քննարկում է այն բարդ ու զգայուն հարցերը, որոնք հնարավոր չէր լուծել ավելի ցածր մակարդակով։ Եվրոպայի խորհուրդը ձևավորում է Եվրամիության ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականությունը, նաև ներկայացնում և հաստատում է որոշակի բարձր պաշտոնների թեկնածուներ այնպիսի կարևոր հաստատություններում, ինչպիսիք են՝ Եվրոպական կենտրոնական բանկը և Եվրոպական հանձնաժողովը։ Եվրոպայի խորհուրդը սովորաբար հանդիպում է երկու անգամ վեց ամսվա ընթացքում՝ նախագահի հրավերով։ Եթե իրավիճակը պահանջում է, խորհուրդը հրավիրում է արտահերթ նիստ։ Նախագահը նշանակվում է երկուսուկես տարի ժամկետով՝ մեկանգամյա երկարաձգմամբ (Լիսաբոնյան պայմանագրի համաձայն)։ Եվրախորհուրդը սովորաբար հանդիպում է Բրյուսելում։

Եվրոպական խորհրդի նախագահի պաշտոնը ներդրվել է Լիսաբոնի պայմանագրով (2,5 տարի ժամկետով, առավելագույնը երկու ժամկետով) և նրա հիմնական գործառույթը Եվրոպական խորհրդի նիստերի նախապատրաստումն է։ Այս գործառույթը բացառում է միաժամանակ այլ պաշտոնավարում։ Նախագահն ընտրվում է Եվրոպական խորհրդի կողմից՝ որակավորված մեծամասնությամբ։

Սցենար

Տասը տարի է անցել այն պահից, երբ Եվրամիությունն իր շարքերն ընդունեց Խորվաթիային (2013 թ.)։ Այդ ժամանակից ի վեր Եվրամիությունը չի ընդլայնվել, սակայն անկում է ապրել՝ Մեծ Բրիտանիան դուրս է եկել միությունից (BrExit)։

Եվրամիության ընդլայնումն ունի կողմնակից, հակառակորդ և չեզոք դիրքորոշում ունեցող երկրներ։ Որպես կանոն, Բալթյան և Արևելյան Եվրոպայի երկրները աջակցում են Եվրամիության մեծացմանն ու բազազանությանը։ Որպես հակառակորդ հանդես են գալիս միության առաջատար երկրները (Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա)։ Ինչ վերաբերում է, այսպես կոչված, չեզոք դիրք ունեցող երկրներին, ապա այս խմբում ընդգրկված են Սկանդինավյան և Կենտրոնական Եվրոպայի երկրները։

Եվրոպական խորհրդի նիստում միության ընդլայնման, թեկնածուի կարգավիճակի տրամադրման և այլ կարևոր որոշումների հետ կապված հարցերն ընդունվում են միաձայն՝ համաձայն կոնսենսուսի/փոխհամաձայնության սկզբունքի։ Այսինքն՝ անդամ 27 երկրների ղեկավարները պայմանավորվում են տրամադրե՞ն, թե՝ ոչ կոնկրետ երկրին թեկնածուի կարգավիճակ։

Եվրոպական խորհրդում որոշումների կայացման գործընթացում յուրաքանչյուր երկիր գործում է սեփական շահերից ելնելով։ Միևնույն ժամանակ, բանակցությունների ընթացքում կոնսենսուսը և համաձայնությունը եվրոպական քաղաքական մշակույթի բաղկացուցիչ տարր են։ Այս պահին ցանկացած երկիր կարող է հրաժարվել իր դիրքերից՝ իրեն ձեռնտու այլընտրանքային առաջարկի պատճառաբանմամբ։ 2022 թվականի հունիսին Եվրոպական խորհուրդը պատմական որոշում կայացրեց՝ Ուկրաինային և Մոլդովային շնորհելով թեկնածուի կարգավիճակ, իսկ Վրաստանին՝ եվրոպական հեռանկար (Ի՞նչ է նշանակում 2022 թվականի հունիսի 23-ը Վրաստանի եվրոպական ապագայի համար, https://infocenter.gov.ge/blog/ras -nishnavs- 2022-ts-23-ivnisi-saqarthvelos-evropuli-momavlisthvis/)

Մոդելավորման և սիմուլյացիայի գործընթացում յուրաքանչյուր ղեկավարի խոսքն ու հետագա բանակցությունների ճիշտ վարումը մեծ նշանակություն ունեն ցանկալի որոշման կայացման համար։

Ծրագրի եզրափակիչ փուլ. Որպես Եվրոպական խորհրդի նիստի մոդելավորման թեմա առաջարկվում է Եվրամիության հետագա ընդլայնման հեռանկարը։

Նախքան մոդելավորումը, ուսումնասիրեք.

● Երկրում առկա հիմնական մարտահրավերները (կենտրոնանալ այնպիսի կարևոր հարցերի վրա, ինչպիսիք են՝ Ռուսաստան-Ուկրաինա պատերազմը, արտագաղթի ճգնաժամը, կլիմայի փոփոխությունը, բնակչության վերաբերմունքը և այլն)։

● Բնակչության վերաբերմունքը Եվրամիության ընդլայնման վերաբերյալ։

● Երկրում առկա սոցիալ-տնտեսական իրավիճակը և այլն։

Հետազոտության արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա ձևավորեք ձեր դիրքորոշումը։ Նիստի ընթացքում կարող եք զիջումների գնալ։

Քարտեզ 1. Եվրամիության անդամ, թեկնածու և հավանական թեկնածու երկրներ

Եվրոպական խորհրդի նիստի մոդելավորման/սիմուլյացիոն ակտիվությունների նմուշ.

* Ցանկալի է, որ մոդելավորումը լուսաբանվի լրատվամիջոցների կողմից: Պատրաստեք սյուժեներ և ուղիղ եթերներ: Այս նպատակով նախապես ընտրեք լրագրողների:

Ակտիվություն I - Նախապատրաստական աշխատանքներ

Պատրաստեք դահլիճը և շրջանաձև դասավորեք սեղաններն ու աթոռները:

* Պատրաստեք անդամ երկրների դրոշները կամ տպեք դրանց գունավոր լուսանկարները:

Ակտիվություն II - Դերերի վերաբաշխում

Բաշխեք դերերը (պատահականության սկզբունքով կամ ըստ ցանկության):

* Ժամանակ տրամադրեք տարբեր դերեր ունեցող առաջնորդներին սեփական դիրքորոշումը ձևակերպելու համար (սա կարող է տեղի ունենալ մոդելավորմանը նախորդող օրերին):

Առաջարկ աշակերտներին. Վրաստանի պատվիրակությունը կարող է ներկայացված լինել վարչապետի, նախագահի կամ միաժամանկ երկուսի կողմից:

* Պատրաստեք դիմումի տեքստը, որտեղ կհիմնավորեք, թե՝

- Ինչո՞ւ պետք է երկրին տրվի Եվրամիության թեկնածուի կարգավիճակ

Իսկ, եթե երկիրն արդեն ունի թեկնածուի կարգավիճակ, ապա՝

- Ինչո՞ւ Եվրամիությունը պետք է արագացված ռեժիմով սկսի Վրաստանի անդամակցության բանակցությունները:

* Մոդելավորման ընթացքում կարող են ներկայացվել հետևյալ դերերը՝ Եվրոպական խորհրդի նախագահ, Եվրոպական հանձնաժողովի նախագահ, Եվրամիության 27 անդամ երկրների բարձրագույն ներկայացուցիչ՝ նախագահ կամ վարչապետ, Վրաստանի ներկայացուցիչ՝ նախագահ կամ վարչապետ և այլն:

Առաջարկ աշակերտներին.

Եվրոպական խորհուրդը միավորում է Եվրամիության անդամ երկրների 27 ղեկավարների (նախագահներ/վարչապետեր/կանցլերներ), Եվրոպական խորհրդի և Եվրոպական հանձնաժողովի նախագահների (ընդհանուր 29 մասնակից): Միաժամանակ հավելյալ տեղեր կան հաշվետու երկրների ղեկավարների համար, ովքեր ցանկանում են ստանալ թեկնածուի կարգավիճակ կամ անդամակցություն:

Հնարավոր է, որ դասարանում համապատասխան թվով աշակերտներ չլինեն: Մենք առաջարկում ենք այս խնդիրը լուծելու երկու տարբերակ.

1. Խմբավորում ըստ մարզերի, օրինակ՝ Մերձբալթյան երկրների շահերը պետք է ներկայացնի մեկ առաջնորդ (աշակերտ), Սկանդինավիան՝ մեկ ուրիշը եւ այլն:

2. Համագործակցեք այլ դասարանների հետ և նրանց ներգրավեք նախագծի իրականացման տարբեր փուլերում:

Եվրոպական խորհրդի նիստը նախագահում է նախագահը, որը չի օգտվում ձայնի իրավունքից: Նա բացում է նիստը, ներկայացնում օրակարգը և ուղղորդում աշխատանքային ընթացքը:

Խորհրդի նախագահը իրավասու է սահմանել/հաստատել բանախոսների ելույթի, բանակցությունների տևողությունը և այլն:

Սիմուլյացիայի սկզբում խորհրդի նախագահը ներկայացնում է օրակարգը, սահմանում ժամկետը, դյուրացնում բանակցային գործընթացը:

Վերաբաշխեք դերերը (պատահականության սկզբունքով կամ ըստ ցանկության).

* Ժամանակ տրամադրեք տարբեր դերեր ունեցող առաջնորդներին դիրքորոշում ձևակերպելու համար (սա կարող է տեղի ունենալ մոդելավորմանը նախորդող օրերին):

Ակտիվություն III - Վրացական պատվիրակության ելույթ

* Վրաստանի պատվիրակությունը կարող է ներկայացնել վարչապետը, նախագահը կամ երկուսը միաժամանակ:

* Պատրաստեք դիմումի տեքստը, որտեղ կհիմնավորեք, թե.

- Ինչո՞ւ պետք է երկրին տրվի Եվրամիության թեկնածուի կարգավիճակ:

Իսկ, եթե երկիրն արդեն ունի թեկնածուի կարգավիճակ, ապա՝

- Ինչո՞ւ Եվրամիությունը պետք է արագացված ռեժիմով սկսի Վրաստանի հետ անդամակցության բանակցությունները:

Ակտիվություն IV - Բանակցային գործընթացի մոդելավորում

Նստաշրջանը բացում է Եվրոպական խորհրդի նախագահը, որը ներկայացնում է օրակարգում ընդգրկված հարցերը:

* Սկսեք քննարկումն ու ներկայացրեք ձեր դիրքորոշումները քննարկված հարցերի վերաբերյալ:

* Բանակցությունների փուլի շրջանակներում փորձեք վարել երկկողմ և բազմակողմ բանակցություններ տարբեր երկրների ներկայացուցիչների հետ:

* Որոշումների կայացրեք և հայտարարեք դրանք:

Հավելված 3.

Նախա և հետթեստեր

* Ցանկալի է, որ ծրագրի սկզբում և վերջում իրականացվեն նախա և հետթեստեր: Ուսուցիչը կարող է բազմերանգել հարցաշարը, լրացնել կամ հավելել այն հարցերով/հայտարարություններով.

Դրույթներ	Լիովին համաձայն եմ	Մասամբ համաձայն եմ	Համաձայն չեմ
Վրաստանի անդամակցությունը Եվրամիությանը կարագացնի երկրի զարգացումն ու առաջընթացը:			
Եվրամիությունը կճանաչի Վրաստանի տարածքային ամբողջականությունը և կաջակցի բռնազավթված տարածքների ապաբռնազավթմանը:			
Ոլորտի զարգացման գործում Եվրամիությունն օգնում է Վրաստանին:			
Եվրամիությունը ֆինանսավորում է ծրագրեր գյուղատնտեսության, շրջակա միջավայրի պաշտպանության, կրթության, ենթակառուցվածքների զարգացման և այլ կարևոր ոլորտներում:			

Անայցեզրային ռեժիմի շրջանակներում Վրաստանի քաղաքացիները կարող են մեկնել Շենգենյան գոտու անդամ և թեկնածու երկրներ:			
Եվրամիությունը տնտեսական-քաղաքական միություն է, որն ուղղված է մայրցամաքում խաղաղության, զարգացման և բարգավաճման ապահովմանը:			
Եվրոպական խորհուրդը Եվրոպական միության ամենաբարձր որոշումներ կայացնող կառույցն է:			
Եվրամիությունը հարգում է բոլոր անդամ երկրների անհատական մոտեցումը տարբեր հարցերի շուրջ:			
Եվրամիության արժեքները չեն հակասում վրացական արժեքներին, ընդհակառակը, լրացնում են միմյանց:			
Եվրամիությունը զարգացման, տեխնոլոգիական առաջընթացի, որակյալ կրթության, կանաչ տնտեսության լավագույն օրինակն է:			
Եվրամիության կրթական ծրագրերը Վրաստանի քաղաքացիներին հնարավորություն են տալիս որակյալ անվճար կրթություն ստանալ եվրոպական համալսարաններում և զբաղվել ոչ ֆորմալ կրթական գործունեությամբ:			

ԻՆՉՊԵ՞Ս ԲԱՐԵԼԱՎԵՆՔ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Թեմա	Դպրոցական հասարակություն
Խնդիր	Դպրոցական ենթակառույցների բարելավում
Նպատակ	Դպրոցական միջավայրի բարելավման ճանապարհով նպաստել աշակերտների մեջ համագործակցության, կազմակերպչականության, թիմային աշխատանքի, ժամանակի մենեջմենտի և այլ ունակությունների զարգացմանը և նրանց՝ որպես պատասխանատու քաղաքացիների ձևավորմանը:
Միջառարկայական ինտեգրացիա	Քաղաքացիական կրթություն, Աշխարհագրություն, Մաթեմատիկա

ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԹԻՐԱԽԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Հասարակություն	Ժողովրդավարություն	Քաղաքացիական մասնակցություն	Կայուն զարգացում
Աշակերտը կարող է ասսերտիվություն դրսևորել այլ մարդկանց/սոցիալական խմբերի/հաստատությունների հետ շփվելիս, գիտակցելով, որ ուրիշների հետ հարաբերություններն օգնում են իրեն իր անձնական զարգացման մեջ: Միաժամանակ, նա գիտի, որ սոցիալական շփումների և անվտանգության կարիքների բավարարումը կարևոր է անձի զարգացման համար: Բացի այդ, աշակերտը հարգում է	Աշակերտը գիտակցում է, որ կարևոր է ընկալել դպրոցը որպես փոքր պետություն՝ նրանում ստեղծելով ժողովրդավարական միջավայր, իսկ ժողովրդավարական միջավայրը ենթադրում է հավասարության, թափանցիկության, ներառականության ապահովում: Միաժամանակ, աշակերտը գիտի, որ յուրաքանչյուր մարդ ունի քաղաքացիական-քաղաքական, սոցիալ-տնտեսական կամ կոլեկտիվ իրավունքներ, և որ դպրոցական համայնքի բոլոր անդամների իրավունքների	Աշակերտը գիտակցում է իր սեփական դերը դպրոցական միջավայրի և ենթակառուցվածքների բարելավման գործընթացում: Նա գիտի, որ ժողովրդավարական դպրոցը բաղկացած է ակտիվ աշակերտներից, այդ թվում, անձամբ՝ իր: Ինչպես նաև՝ որպես պատասխանատու աշակերտ, ծրագրերի պլանավորմամբ իրականացմամբ և կամավորությամբ կարող է լուծել դպրոցական համայնքում առկա խնդիրները՝ հաշվի առնելով հավասարության և	Աշակերտը գիտակցում է, որ դպրոցական համայնքում ենթակառուցվածքային խնդիրների լուծման գործընթացում կարևոր է ռեսուրսների կայուն օգտագործումը, որպեսզի երկարաժամկետ հեռանկարում դա բացասաբար չանդրադառնա տեղական համայնքի և, հետևաբար, ամբողջ աշխարհի վրա: Աշակերտը նաև հասկանում է, որ տեղական գործողությունները կարող են ունենալ գլոբալ հետևանքներ, և որ կայուն զարգացումը կարևոր է մարդու

տարակարծությունն ու կարող է պատասխանատվություն կրել և համագործակցել ընդհանուր աշխատանք կատարելու գործընթացում:	պաշտպանությունը հավասարապես կարևոր է ժողովրդավարական միջավայրի ձևավորման համար: Նա քաջատեղյակ է աշակերտի իրավունքներին և պարտականություններին:	թափանցիկություն սկզբունքները: Այս գործընթացում նա համագործակցում է տարբեր հաստատությունների և անհատների հետ:	բարեկեցության և զարգացման համար: Աշակերտը կարող է նորարարության միջոցով ենթակառուցվածքների բարելավումը կապել կայուն զարգացման հետ:

ԾՐԱԳՐԻ ԿԱՊԸ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Արժեքներ. մարդու արժանապատվության և իրավունքների գնահատում, մշակութային բազմազանության գնահատում, ժողովրդավարության, արդարության, բարեխղճության, հավասարության և օրենքի գերակայության գնահատում:

Վերաբերմունք. հարգանք, քաղաքացիական մտածողություն, պատասխանատվություն, վստահություն, մշակութային տարբերությունների, աշխարհայացքների, համոզմունքների կամ սկզբունքների նկատմամբ հանդուրժող լինելու պատրաստակամություն:

Հմտություններ. վերլուծական և քննադատական մտածողության հմտություններ, լսելու և ուշադրության հմտություններ, կարեկցանք, լեզվի, հաղորդակցման և բազմալեզու հմտություններ, համագործակցության հմտություններ, կոնֆլիկտների լուծման հմտություններ:

Գիտելիք և քննադատական մտածողություն. ինքնագիտակցություն և քննադատական մտածողություն, լեզվի և հաղորդակցման գիտելիքների տիրապետում և քննադատական վերլուծություն:

ՓՈՒԼ I . ԽՆԴԻՐԸ ԲԱՑԱՀԱՅՏԵԼՈՒ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐԵԼՈՒ ՓՈՒԼ

Երաշխավորություն ուսուցիչներին՝

Առաջարկվող նախագծի օրինակն ուղղված է դպրոցի ենթակառուցվածքի բարելավմանը, սակայն հնարավոր է ուղղել այն նաև բնապահպանությանը, ժողովրդավարության որակի բարձրացմանը, ճանաչողական/մարզական գործունեության բազմազանությանը, ակումբների ստեղծմանը և այլն:

Ծրագրի իրականացման գործընթացում ինչպիսի՞ ենթակառուցվածքային խնդիր կա, որի կարգավորմանը պետք է ուղղված լինի ամբողջ նախագիծը: Սա կարող է վերաբերել հանգստյան տարածքների, բակի, լաբորատորիայի, գրադարանի, որևէ հատուկ տարածքի և այլն:

Խնդրի ձևակերպման օրինակ

Դպրոցում երեխան անցկացնում է իր կյանքի կարևոր փուլը՝ 12 տարի: Հենց այս ժամանակահատվածում են ձևավորվում նրա հիմնական արժեքները, որոնք հետագայում պետք է ազդեն ողջ կյանքի վրա: Դպրոցը ոչ միայն կրթում է երեխային, այլև օգնում անձնական և սոցիալական զարգացման մեջ: Ուստի կարևոր է դպրոցում ստեղծել առողջ, դրական միջավայր, որը կենտրոնացած է երեխայի ճիշտ զարգացման վրա: Առողջ միջավայրը ներառում է ամեն ինչ՝ ընդհուպ ենթակառուցվածքներ, ուսուցիչների վերաբերմունք, ժողովրդավարություն և կրթական ռեսուրսների ապահովում:

ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ, 2022 թվականին Saxstat-ի կողմից անցկացված հարցման համաձայն, ծնողների մեծամասնությունը գոհ է դպրոցում ստացած կրթությունից, սակայն ուսումնական նյութերի բացակայությունը դեռևս շարունակում է էական խնդիր մնալ Վրաստանում: Մասնավորապես, երեխաների 45%-ը չունի առնվազն մեկ ուսումնական պարագա: Հետազոտության համաձայն, ամենից հաճախ պակասող ուսումնական առարկաները համակարգիչներն են (29%), որին հաջորդում են նկարչական նյութերը, գրքերն ու երաժշտական գործիքները:

Քայլեր, որոնք պետք է ձեռնարկվեն խնդիրը բացահայտելու և հիմնավորելու համար

Աշակերտներին լիարժեք տեղեկություն տրամադրել դպրոցական համայնքի անդամների և Աշակերտական ինքնակառավարման անդամների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ.

Քննարկում - Ի՞նչ դեր կարող եմ խաղալ իմ դպրոցի բարելավման գործում:

Ակտիվ աշակերտների կողմից դպրոցի բարելավման նպատակով իրականացված նախագծերի և օրինակների հետ ծանոթացում:

Նյութի մշակում և քննարկման կազմակերպում հետևյալ հանգուցային հարցերի շուրջ.

Ո՞րն է տարբերությունը կանոնների, իրավունքների և պարտականությունների միջև և կարո՞ղ են, արդյոք, դրանք փոփոխվել:

Որո՞նք են աշակերտի իրավունքներն ու պարտականությունները դպրոցում:

Ո՞վ ի՞նչ ներդրում կարող է ունենալ դպրոցական միջավայրի բարելավման մեջ:

Ի՞նչ արդյունքների կարելի է հասնել այս ծրագրի իրականացմամբ:

Պահանջվող ռեսուրսներ՝ պրոյեկտոր, նոութբուք (տեսա/ֆոտո ռեսուրսներ ցուցադրման համար):

Բացի այդ, մի շարք դպրոցներ դեռևս ենթակառուցվածքային խնդիրներ ունեն, ավելին՝ հրատապ վերականգնման անհրաժեշտություն: Կառավարության ծրագրի համաձայն, մինչև 2026 թվականի ավարտ, Վրաստանում պետք է վերականգնվի կամ կառուցվի 800 դպրոց, սակայն, քանի որ հանրապետությունում 2089 հանրակրթական դպրոց կա, որոշ դպրոցներում, հատկապես արդիական են մնում ենթակառուցվածքային խնդիրները: Այնուամենայնիվ, ենթակառուցվածքը չի նշանակում միայն բարեկարգ և անվտանգ շենք, և այն միշտ կարող է բարելավման ենթարկվել: Միաժամանակ հնարավոր է բարելավվեն/ստեղծվեն տարածքներ, որոնք հարմարեցված կլինեն աշակերտների հետաքրքրություններին, օրինակ՝ գրադարան, լաբորատորիա, դահլիճ, երաժշտական սենյակ, բացօթյա տարածք, սպորտային ենթակառուցվածք, հանգստի տարածք և այլն:

Առկա մարտահրավերներն այսօր պատճառ են դառնում դպրոցներում այնպիսի միջավայրի ձևավորման, ուր աշակերտը չի շտապում ներկայանալ և իրեն հարմարավետ զգալ: Եվ սակայն, հնարավոր է, որ դպրոցական համայնքի անդամների ակտիվությամբ ու ջանքերով դպրոցական ենթակառուցվածքն ավելի գրավիչ, հետաքրքիր ու արդյունավետ դառնա՝ ծառայելով երեխայի զարգացմանը: Այստեղ գլխավոր դերակատարը

ոչ միայն դպրոցի տնօրինությունը կամ ուսուցիչն են, այլև անձամբ աշակերտն ու նրա ծնողները, քանի որ վերջիններս հստակ գիտեն, թե ի՞նչ են ուզում դպրոցից, ի՞նչ մարտահրավերներ են տեսնում և ի՞նչ կարելի է անել դպրոցը բարելավելու համար։ Այս գործընթացում առաջնային դերակատարը՝ Աշակերտական ինքնակառավարումն է, բայցևայնպես յուրաքանչյուր աշակերտ և ծնող պարտավոր է հոգալ դպրոցի մասին։ Այդ իսկ պատճառով կարևոր է տվյալ նախագծի կյանքի կոչումը։ Այն ոչ միայն աշակերտներին մղում է դեպի միջավայրի բարելավման պատասխանատվություն, այլև օգնում զարգացնել այնպիսի կարևոր հմտություններ, ինչպիսիք են՝ համագործակցությունը, թիմային աշխատանքը, կազմակերպչականությունը, պլանավորումը, ժամանակի կառավարման հմտություններն ու դրանց պատասխանատվությունը՝ որպես ակտիվ քաղաքացիների։

Խնդիրների բացահայտման և ծրագրի ակտիվությունների իրականացման լծակներ

- Մասնակցություն դպրոցի ինքնակառավարմանը
- Կրթական պարտեզի օրինակ
- Ինչպե՞ս դառնամ ակտիվ քաղաքացի (էջ 18-21)
- Քաղաքացիական կրթության դասարանային նախագծերի հրահանգներ
- Ուսուցիչների մասնագիտական վերապատրաստման ծրագիր՝ «Ժողովրդավարական քաղաքացիության ուսուցում», քաղաքացիական կրթության կարևորությունը և դպրոցի դերը։

Ենթակառուցվածքային խնդիրները բացահայտելու անհրաժեշտ ակտիվություններ

Դպրոցական միջավայրի, մասնավորապես ենթակառուցվածքի բարելավմանն ուղղված կոնկրետ նախագիծ պլանավորելու համար ցանկալի է, որպեսզի դպրոցական համայնքում խնդրի բացահայտման հետազոտություններ իրականացվեն։ Ահա մի քանի ակտիվություն, որոնք անհրաժեշտ կլինի կիրառել հետազոտության փուլում.

1. Քննարկում. Ի՞նչ է հարկավոր դպրոցին։ Քննարկմանը կարող է մասնակցել դպրոցական համայնքի ցանկացած անդամ (աշակերտ, ուսուցիչ, ծնող, ղեկավարություն)։ Առաջարկվում է նախօրոք հայտնել քննարկման ժամն ու վայրը, տրամադրելով տեղեկատվությունը դպրոցական համայնքի անդամներին մոտ մեկ շաբաթ առաջ։

Քննարկման արդյունքում, ծրագրում ընդգրկված աշակերտները տեղեկատվություն կստանան դպրոցական համայնքի մարտահրավերների և ենթակառուցվածքային կարիքների մասին, ինչը կօգնի կազմակերպել նախագիծը պլանավորելու անհրաժեշտ հետազոտությունը։

2. Հետազոտության պլանավորում. Ուսուցիչը նախագծում աշխատող աշակերտներին կներկայացնի հետազոտության տեխնիկան (ուսուցչի համար անհրաժեշտ ռեսուրս՝ էջ 25-33), այնուհետև աշակերտները կպլանավորեն հետազոտությունը՝ բարելավելու համար դպրոցական կյանքը և միջավայրը և կբացահայտեն դպրոցական համայնքի ենթակառուցվածքային խնդիրները։ Նրանք կպատրաստեն հարցաթերթիկ, ըստ որի պետք է հարցազրույց վարեն դպրոցական համայնքի անդամների հետ (տե՛ս առցանց հարցաշար ստեղծելու հղումը)։

3. Հետազոտության անցկացում և արդյունքների վերլուծություն. Աշակերտներն իրականացնում են հարցում, հավաքագրում տվյալներ և վերլուծում արդյունքները: Այնուհետև տեսակավորում են հարցման արդյունքում բացահայտած խնդիրներն ու անհրաժեշտությունները, ինչպես նաև հանրության ցանկություններն ու գաղափարները:

Փուլ II - Նպատակների, առաջադրանքների և դրանք հաղթահարելու համար անհրաժեշտ ակտիվությունների սահմանում

Երաշխավորություն ուսուցիչներին՝

Առաջարկ ուսուցչի համար. Նախագծում առաջարկվող նպատակներին և առաջադրանքներին առնչվող ակտիվությունները խոհրդատվական են և հնարավոր է, որ հարմարեցվեն ձեր աշակերտների և դպրոցի անհրաժեշտություններին և հետաքրքրություններին: Ծրագրի իրականացմանն անհրաժեշտ ակտիվությունների պլանավորման գործընթացում կարևոր է Աշակերտական ինքնակառավարման ներգրավումը և կամ միգուցե հենց Աշակերտական ինքնակառավարումը պլանավորի նախագիծն ամբողջությամբ: Բացի այդ, խորհուրդ է տրվում, որ ծրագրի շրջանակներում միջոցառումների պլանավորման/իրականացման բոլոր փուլերում տեղեկատվություն տրամադրվի դպրոցական համայնքի բոլոր անդամներին, և ցանկության դեպքում յուրաքանչյուրը հնարավորություն ունենա ներգրավվել գործընթացի ցանկալի փուլ:

Աշակերտների ներգրավվածության և մասնակցության որակը բարձրացնելու համար առաջարկեք նրանց նշված նյութն իբրև օրինակ և միասին որոշեք ծրագրի շրջանակներում առկա առաջնահերթություններն ու այլ մանրամասներ, օրինակ այն, թե ինչպե՞ս բացահայտել դպրոցի ենթակառուցվածքային խնդիրներն ու կարիքները, ո՞ւմ հետ իրականացնել տվյալ գործընթացը և կամ, ո՞ւմ ներգրավել տվյալ գործընթաց:

Ծրագրի նպատակի, առաջադրաքների և ակտիվությունների նմուշ

Նպատակ. Դպրոցական միջավայրի բարելավման ճանապարհով նպաստել աշակերտների համագործակցության, կազմակերպչական, թիմային աշխատանքի, ժամանակի կառավարման և այլ հմտությունների զարգացմանը և նրանց՝ որպես պատասխանատու քաղաքացիների ձևավորմանը:

Նպատակին հասնելու համար կատարեք հետևյալ առաջադրանքները.

● Գիտակցական մոտեցում դպրոցական համայնքի անդամների իրավունքների և պարտականությունների հանդեպ՝ աշակերտների կողմից:

● Դպրոցական միջավայրի բարելավմանն ուղղված նախագծերի իրականացում՝ աշակերտների կողմից:

● Տարբեր հմտությունների (համագործակցություն, թիմային աշխատանք) և իրավասությունների (պատասխանատվության) զարգացում՝ աշակերտների շրջանում:

Ակնկալվող արդյունքներ.

Աշակերտները իրազեկված են դպրոցական համայնքի յուրաքանչյուր անդամի իրավունքների ու պարտականությունների մասին և գիտակցում են, որ հասարակության ցանկացած այլ անդամի նման իրենք ևս ունեն նույն պատասխանատվությունը բարելավելու համար այն միջավայրը, որտեղ սովորում և ապրում են: Նրանք ստանձնում են այդ պատասխանատվությունը և կարողանում են համագործակցել ու աշխատել որպես թիմ՝ ընդհանուր աշխատանք կատարելիս:

Նպատակը, առաջադրանքները և ակտիվությունները սահմանելիս հնարավոր է հետևյալ հարցերի կիրառումը.

Որո՞նք են աշակերտի իրավունքներն ու պարտականությունները՝ որպես դպրոցական համայնքի անդամ:

Ինչպիսի՞ ներդրում կարող եմ ունենալ դպրոցական միջավայրի բարելավման գործում:

Ինչպե՞ս կարող եմ համագործակցել դպրոցական համայնքի այլ անդամների և տեղական համայնքի ներկայացուցիչների հետ ծրագրեր իրականացնելիս:

Ակտիվությունների նմուշներ

Ակտիվություն	Ակտիվության նպատակը	Ենթաակտիվություններ
Հետազոտության արդյունքների մասին տեղեկատվության փոխանցում դպրոցական համայնքի անդամներին	Դպրոցում ենթակառուցվածքային խնդիրների բացահայտում և առաջնահերթությունների սահմանում	* Հանդիպման կազմակերպում: *Դպրոցական համայնքի անդամների հրավեր: * Հետազոտության արդյունքների մասին դպրոցական համայնքի անդամների իրազեկման շնորհանդեսի կազմակերպում: * Շնորհանդեսին հաջորդող բանավեճի ֆասիլիտացիա:
Առաջարկների մշակում	Դպրոցում բացահայտված ենթակառուցվածքային խնդիրների լուծմանն անհրաժեշտ ակտիվությունների կազմում	* Նախագծին մասնակից աշակերտների հանդիպման կազմակերպում: * Հետազոտության վերլուծության և դպրոցական համայնքի հետ քննարկումների արդյունքների հիման վրա առաջարկների մշակում: * Առաջարկների տրամադրում դպրոցի ղեկավարությանը: *Առաջարկների տեղադրում դպրոցական ստենդին:
Սեմինար. Ինչպե՞ս գրել նախագիծ	Աշակերտների շրջանում նախագծային հայտ պատրաստելու կարողության զարգացում	*Ուսուցիչը սեմինար է ծրագրում կամ հրավիրում է համապատասխան հյուրի սեմինար անցկացնելու համար: * Հանդիպման կազմակերպում: *Հանդիպման համար անհրաժեշտ տարածքի և տեխնիկական սարքավորումների պատրաստում: *Սեմինարի/Աշխատաժողովի անցկացում: *Ծրագրի իրականացմամբ հետաքրքրված կողմերի նույնականացում: (Ռեսուրս. Շահագրգիռ կողմերի վերլուծություն) Հավելված 1
Հանդիպում ծնողների հետ	Ծնողների ներգրավվածության խթանում՝ ծրագրի իրականացման գործընթացում	*Ծնողների հրավեր-նամակի կազմում: (Ռեսուրս. Ծնողներին հրավիրող նամակի կազմում) Հավելված 2 *Դասղեկի կողմից աշակերտների ծնողներին դպրոցի խնդիրների մասին տեղեկատվության տրամադրում: *Ծնողների հետ հանդիպման կազմակերպում: *Հանդիպման համար անհրաժեշտ տարածքի և տեխնիկական սարքավորումների պատրաստում:

		*Հանդիպում անցկացրեք և տեղեկություններ հավաքեք այն մասին, թե ինչպես կարող են ծնողները ներգրավվել դպրոցում առկա խնդիրների լուծման գործում: (Ծանոթագրություն. այս գործընթացում կարևոր է դասղեկների ներգրավվածությունն ու դերը:)
Ծրագրի պլանավորում	Դպրոցում բացահայտած ենթակառուցվածքային մարտահրավերները հաղթահարելու համար նախագծի/նախագծերի մշակում:	* Նախագծին մասնակցող աշակերտների հանդիպման կազմակերպում: *Հետազոտության արդյունքների վերլուծության և դպրոցական համայնքի հետ կայացած հանդիպումների արդյունքում հնչած առաջարկների հիման վրա նախագծային ուղղությունների ձևավորում: * Աշակերտական խմբերի ստեղծում՝ ըստ ծրագրի: * Աշակերտների կողմից ծրագրի պլանավորում/նախագծային հայտի պատրաստում:
Սեմինար. «Ֆանդրեյզինգ» թեմայով (Հիմնադրամների որոնում)	Ծրագրին մասնակից մարդկանց/աշակերտների համար միջոցներ/դրամաշնորհներ գտնելու ուղիների մասին տեղեկատվության տրամադրում	*Հրավիրել հյուրի, ով ունի դրամաշնորհ հայթայթելու փորձ (կարող է լինել ցանկացած հասարակական կազմակերպություն): * Հանդիպման կազմակերպում: *Հանդիպման համար անհրաժեշտ տարածքի և տեխնիկական սարքավորումների պատրաստում: Առարկայական ինտեգրում՝ Մաթեմատիկա
Հանդիպում բիզնեսի հետ	Ծրագրի աջակցությամբ տեղական բիզնեսի ներգրավում:	* Տեղական ձեռնարկությունների/գործարարների մասին տեղեկատվության հավաքագրում: *Բիզնեսի հետ հանդիպման պլանավորում (հնարավոր է հրավիրել դպրոց կամ այցելել նրանց, եթե առերես հանդիպումը չի հաջողվում, ապա կարելի է դիմել գրավոր կամ էլեկտրոնային տարբերակով):

Նախագծի ներկայացում դպրոցի տնօրինությանը	Աշակերտների նախագծերի իրականացմանը պաշտոնական միջամտության, դպրոցական կյանքում նրանց ներգրավվածության և հաշվառման աջակցություն:	· Հաշվի առնելով կազմակերպչական խմբի բյուջեն և կազմը (գործառութային բաշխում), աշակերտների կողմից պատրաստված նախագծային հայտը, կներկայացվի տնօրինություն: Այդ նպատակով աշակերտները պատրաստում են դիմում (յուրաքանչյուր դպրոց ունի դիմումի ձև), որը կցում են նախագծին: Գործավարը դիմումը համարակալում է և ուղարկում տնօրինությանը՝ քննարկման նպատակով: · Տնօրինությունը կարող է թույլտվություն տալ ծրագրի իրականացմանը և կամ նախագծով նախատեսված գործողություններից որևէ մեկի ճշգրտման շուրջ որևէ առաջարկով հադես գալ: ·Նախագիծը տնօրինությանը ներկայացնելիս կազմակերպչական խմբի ամրագրումը, դպրոցական ակտիվությունների մեջ աշակերտների ներգրավվածության հնարավորությունն է ստեղծում: Սա դպրոցին լրացուցիչ լծակներ է հաղորդում դպրոցական ակտիվությունների մեջ աշակերտների ներգրավվածության պաշտոնական տվյալների վերաբերալ:
Նախագծերի իրականացում	Աշակերտների կողմից նախագծային դիմումի մեջ նշված ակտիվությունների իրականացում:	*Աշակերտների խմբերը ձեռնարկում են անհրաժեշտ քայլեր նախագիծն իրականացնելու համար:
Եզրափակիչ միջոցառում . արդյունքների ամփոփում	Դպրոցական համայնքի անդամների իրազեկում՝ իրականացված ծրագրերի արդյունքների մասին:	* Եզրափակիչ միջոցառման կազմակերպում՝ համապատասխան լսարանի կամ տեխնիկական սարքավորումների պատրաստում: * Միջոցառմանը ներկաների հրավիրում (դպրոցական համայնքի անդամներ, համայնքի և տեղական ինքնակառավարման ներկայացուցիչներ), * Միջոցառմանը հանդես եկող բանախոսների ընտրություն: * Շնորհանդեսին հաջորդող քննարկում/վերանայում: * Ապագա պլանների կազմում:
Ուղեցույցի կազմում	Ծրագրի կայունության ապահովում:	*Ուղեցույցի կազմման վրա աշխատող աշակերտների ընտրություն: * Աշակերտների կողմից ուղեցույցի կազմում: *Ուղեցույցի տպագրում (անհրաժեշտության դեպքում) և փոխանցում գրադարան(ներ)ին: *Աշակերտների կողմից Ուղեցույցի փոխանցում դպրոցական համայնքին:

ժամանակի և պատասխանատու անձանց վրա ակտիվությունները բաշխեք ըստ անհրաժեշտության

Գործունեության ցանկ	
1. Դպրոցական համայնքի անդամների իրազեկում՝ հետազոտության արդյունքների մասին:	7. Հանդիպում բիզնեսի հետ:
2. Առաջարկների մշակում:	8.Նախագծի ներկայացում դպրոցի տնօրինությանը:
3. Սեմինար. Ինչպե՞ս գրել նախագիծ:	9. Նախագծերի իրականացում:
4. Հանդիպում ծնողների հետ:	10.Եզրափակիչ միջոցառում՝ արդյունքների ամփոփում:
5. Նախագծի պլանավորում:	11. Ուղեցույցի կազմում:
6. Սեմինար. Fundraising թեմայով:	

III փուլ - Համագործակցություն և նախագծի իրականացում

Առաջարկ ուսուցչին.

Ծրագիրն իրականացնող աշակերտները պետք է մշտապես համագործակցեն դպրոցական համայնքի անդամների հետ: Բոլոր փուլերում նրանք պետք է իրազեկեն ծրագրի ընթացքի մասին, որպեսզի դպրոցում գործընթացները լինեն ավելի ժողովրդավարական և թափանցիկ: Ուստի խնդրեք աշակերտներին ծրագրի մասին տեղեկատվությունը հենց սկզբնական փուլում տարածել դպրոցական համայնքում:

Շահագրգիռ կողմերի վերլուծություն . Պոտենցիալ աջակիցներ

Համամասնակիցների որոնում

Ծրագրի շրջանակներում կարևոր և անհրաժեշտ կլինի համագործակցությունը ոչ միայն դպրոցական համայնքի, այլև հանրության այլ անդամների՝ տեղական համայնքի, կառավարության, հասարակական կազմակերպությունների, բիզնեսի և այլոց հետ: Համագործակցությունը ձևավորվում է ըստ անհրաժեշտության և պայմանավորված նրանով, թե դպրոցական միջավայրի բարելավման համար ինչ ծրագրեր են նախատեսվում:

Հանդիպումների կազմակերպում

Պայմանավորված ծրագրի բնույթով և ձևաչափով, կարևոր է կանոնավոր հանդիպումներ կազմակերպել նախևառաջ՝ դպրոցական համայնքի անդամների հետ: Միաժամանակ նաև այն կազմակերպությունների կամ անձանց հետ, ովքեր կարող են աջակցել ծրագրի շրջանակներում նախատեսված ակտիվություններին, ինչպես ֆինանսական, այնպես էլ այլ տիպի ռեսուրսներով:

Դպրոցական ինքնակառավարման ներգրավում

Այս նախագծում հատկապես կարևոր է Դպրոցական ինքնակառավարման ներգրավվածությունը: Ավելին, հնարավոր է, որ նախագծի լիարժեք իրականացնողը դառնա հենց Աշակերտական ինքնակառավարումը:

Կազմակերպություններ, որոնց հետ հնարավոր է համագործակցել ծրագրի շրջանակներում.

● Օրբելիանի մետի

● Initiatives.GE

● Տեղական ինքնակառավարում

● Տեղական ընկերություն/ձեռնարկություններ

● Հասարակական կազմակերպություններ, որոնք պարբերաբար հայտարարում են փոքր դրամաշնորհներ՝ ծրագրերի շրջանակներում աշակերտներին աջակցելու համար

IV փուլ՝ Կայունություն

Առաջարկվում է ծրագրին մասնակից աշակերտների հետ, ամփոփիչ միջոցառման շրջանակներում, նախանշել այն քայլերն ու ապագա միջոցառումները, որոնք կնպաստեն ծրագրի կայունությանը: Բացի այդ, ցանկալի է ստեղծված արտադրանքը և դրանց արդյունքները կիսել տեղական համայնքի հետ, որպեսզի նրանք իրազեկված լինեն, թե ինչ ծրագրեր են իրականացվում համայնքում, ինչպես նաև կուտակված փորձով կիսվել այլ դպրոցների հետ:

Ծրագրի գնահատում

Նախագիծը գնահատելու համար ցանկալի է դպրոցական համայնքի անդամների համար պատրաստել հատուկ հարցաշար, որտեղ նրանք կգնահատեն ծրագրի արդյունքները: Բացի այդ, կարևոր է հենց նախագծին մասնակից աշակերտների հետ անցկացնել ռեֆլեքսիա, որտեղ կքննարկվեն, թե որոնք էին խոչընդոտները, ինչպես հաղթահարվեցին դժվարությունները և կամ հետագայում նմանատիպ նախագծեր իրականացնելիս ի՞նչ պետք է հաշվի առնել, որպեսզի առավել պարզեցվի գործընթացը:

Ծրագրի կայունություն

Ծրագրի կայունությանը կնպաստի վերջին ակտիվությունը, որը նախատեսում է հատուկ ուղեցույցի կազմում: Ուղեցույցը օգտակար կլինի այլ խմբերի աշակերտների և, առավել ևս, ապագայում՝ այլ դպրոցների համար:

Ակնկալվող ռիսկեր

- Զախողում՝ ծրագրի իրականացման պոտենցիալ ֆինանսական աջակիցների ձեռքբերման հարցում

- Դպրոցական համայնքի անդամների պասիվություն՝ ծրագրի իրականացմանն անհրաժեշտ քայլերի ձեռնարկման հարցում

Գնահատում ըստ սոլոտաքսոնոմիայի

	Հասարակություն	Ժողովրդավարություն	Քաղաքացիական մասնակցություն	Կայուն զարգացում
Հարաբերական մակարդակ	Աշակերտը ասսերտություն է ցուցաբերում այլ մարդկանց/սոցիալական խմբերի/հաստատությունների հետ շփվելիս, բացատրում է առողջ շփման և անձնական զարգացման փոխհարաբերությունները: Բացի այդ, վերլուծում է, որ ցանկացած մարդու զարգացման համար անհրաժեշտ են սոցիալական շփումներ, հարգում է տարբեր կարծիքներ և համագործակցում ուրիշների հետ:	Աշակերտը վերլուծում է դպրոցում ժողովրդավարական միջավայրի հաստատման կարևորությունը և գիտակցում, որ դպրոցական համայնքի յուրաքանչյուր անդամի իրավունքների պաշտպանությունը հավասարապես կարևոր է ժողովրդավարական միջավայր ստեղծելու համար, որն իր հերթին էական դեր է խաղում դպրոցական միջավայրի բարելավման գործընթացում:	Աշակերտը բացահայտում է խնդիրը դպրոցում, կարող է վերլուծել բարելավմանը հաջորդող արդյունքները և մասնակցել դրա լուծման համար անհրաժեշտ քայլերի ծրագրմանն ու իրականացմանը: Նաև, որպես պատասխանատու աշակերտ, ցույց է տալիս հավասարության և թափանցիկության կարևորությունը դպրոցական համայնքի խնդիրների լուծման գործում և տեսնում է իր՝ կամավորի դերը, ծրագրերի պլանավորման և իրականացման մեջ:	Աշակերտը բացատրում է ռեսուրսների կայուն օգտագործման կարևորությունը դպրոցական համայնքում ենթակառուցվածքային խնդիրների լուծման գործընթացում: Միաժամանակ, եզրահանգում է, որ տեղական գործողությունները կարող են ունենալ գլոբալ հետևանքներ: Բացի այդ, աշակերտը կապ է հաստատում նորարարության և ենթակառուցվածքների բարելավման ու կայուն զարգացման միջև:

Հավելված 1

ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Շահագրգիռ կողմը՝ անձ, խումբ կամ կազմակերպություն է, որն ազդում է մեզ համար կարևոր գործընթացի վրա և կամ, որի վրա ազդեցություն է ունենում տվյալ գործընթացը:

Ձեր դպրոցական կյանքից մեկ գործընթաց ընտրեք, որի համար կարևոր է ապահովել քաղաքացիական մասնակցություն:

Մտածեք, թե ովքեր են ներկայացնում շահագրգիռ կողմերն այս գործընթացում.

.....
.....
.....

Գնահատեք շահագրգիռ կողմերն ըստ գործընթացի վրա ունեցած իրենց ազդեցության և գործընթացի նկատմամբ նրանց հետաքրքրության հիման վրա լրացրեք աղյուսակը (նշեք + համապատասխան սյունակ(ներ)ում:

Շահագրգիռ կողմ	Ազդեցություն	Հետաքրքրություն

Տեղադրել շահագրգիռ կողմերը գծապատկերի համապատասխան հատվածում (Հաջորդ էջում):

Ընտրեք մի քանի շահագրգիռ կողմ և մտածեք, թե ինչ կարելի է անել նրանց մասնակցությունը (ազդեցությունը և հետաքրքրությունը) մեծացնելու համար:

Շահագրգիռ կողմերի վերլուծության գծապատկեր

Շահագրգիռ կողմ	Մասնակցության մեծացման ռազմավարություն

Հավելված 2
ՀԱՆԴԻՊՈՒՄ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Ուղղորդում. Ծնողները, ինչպես նաև աշակերտները, ուսուցիչներն ու դպրոցի տնօրինությունը դպրոցական համայնքի անդամներ են, ուստի կարևոր է նրանց ծանոթացնել պլանավորված նախագծին (նախագծերին) և ապահովել նրանց ներգրավվածությունը ծրագրի իրականացման գործընթացում: Խնդրեք դասղեկներին/դպրոցի ղեկավարությանը օգնել ծնողների հետ հանդիպում կազմակերպելու հարցում: Ձեր նպատակն է ծանոթացնել նրանց նախագծի մանրամասներին, լսել նրանց կարծիքը և տեղեկություններ հավաքել նախագծում նրանց հնարավոր ներդրումների մասին: Դուք պլանավորում եք հանդիպել ձեր ծնողներին հաջորդ շաբաթ, այնպես որ պատրաստեք հրավեր- նամակ նրանց համար:

Հրավերը պետք է պարունակի հետևյալ տեղեկատվությունը.

Հանդիպման նպատակը

Տեղեկատվություն՝ ծնողների մոտիվացիան մեծացնելու համար

Հանդիպման պլան (քննարկվող հարցեր):